«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՍՏՊՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....12
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....17
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....21
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....31
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....34
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....36
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....40
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....43
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....47
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....50
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....51
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....51
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....53
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....55
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....56
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....57
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....58

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 1995թ.Կապանի շինարարական և լեռնամետալուրգիական տեխնիկումի հիմքի վրա: Այն գտնվում է Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքում: ՀՀ կառավարության որոշմամբ 1997թ. քոլեջը վերակազմավորվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի քոլեջի: 2002թ. ՀՀ կառավարության հունիսի 20-ի թիվ 1009-Ն որոշմամբ այն վերակազմակերպվել է «Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ» ՊՈԱԿ: 2011թ քոլեջը վերակազմակերպվել է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ: Քոլեջը սպասարկում է ինչպես Կապանի տարածաշրջանին մինչև 40 կմ շառավղով, այնպես էլ Քաջարան քաղաքին և մարզի մեջ ներառված Սիսիանի, Գորիսի, Մեղրիի նախկին վարչական շրջաններին[1]:

ՄՈՒՀ-ը ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն»՝ մարզի զարգացման հիմնական գերակայություն է սահմանվել լեռնահանքային արդյունաբերությունը, տրանսպորտի զարգացումը և ճանապարհային ենթակառուցվածքների բարելավումը, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի զարգացումը, տրանսպորտային միջոցների սպասարկումը, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի զարգացումը[2]: Դիտարկելով քոլեջի իրականացրած կրթական ծրագրերի և մարզի առաջնահերթությունների համապատասխանեցումը, նշենք որ, ՄՈՒՀ-ում ներկայումս իրականացվում են՝ «Բաց լեռնային աշխատանքներ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրամսպորտում», «Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայաններ» կրթական ծրագրերը:

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացման նպատակով դասավանդում է 39 դասախոս, որից ներկայումս միայն մեկն է գոծատու դասավանդող:

Ըստ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն»՝ մարզի կրթական համակարգի հիմնական խնդիրն է հանդիսանում աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանող մասնագիտական

[1] ՍՏՊՔ ինքնավերլուծություն, էջ 5

[2] Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, file:///C:/Users/a.karapetyan/Downloads/29670.pdf , էջ 47-53

կրթության ծրագրերը, ինչը բերում է մարզի առաջնահերթություններում պահանջվող մասնագետների պակասի: «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, Սյունիքի մարզում լինելով միակ բազմագործառութային միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը, նշանակալի դեր է կատարում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ նպաստելով մասնագիտական կրթության զարգացմանը: Քոլեջը սպասարկում է ինչպես Կապանի տարածաշրջանին, այնպես էլ Քաջարան քաղաքին և մարզի մեջ ներառված Սիսիանի, Գորիսի, Մեղրիի նախկին վարչական շրջաններին:

Քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 358 ուսանող: Քոլեջում դասավանդում են 39 դասախոս, որոնցից 4-ը՝ համատեղությամբ, 2-ը՝ ժամավճարային, իսկ պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսներ Քոլեջը չունի: 2022-2023 ուս տարում 81 շրջանավարտներից 13-ը շարունակել են ուսումը բուհերում, 7–ը զորակոչվել են բանակ, 30–ը աշխատում են իրենց մասնագիտությամբ, 16–ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, մնացած 15-ը չեն աշխատում[3]:

Քոլեջին «Հաշվապահական հաշվառում» (հեռակա), «Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր», «Կապի միջոցների շահագործում», «Բաց լեռնային աշխատանքներ» (հեռակա), «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրամսպորտում» (հեռակա), «Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում», «Ատաղձագործական, մարահատակագործական ապակեգործական աշխատանքների», «Համակարգիչների շահագործում» մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի հատկացվում են 20 լիցենզիոն տեղեր, «Նախադպրոցական կրթություն», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր», «Բաց լեռնային աշխատանքներ», «Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրամսպորտում» մասնագիտությունների ընդունելության համար՝ 25 լիցենզիոն տեղեր, «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության ընդունելության համար՝ 28 լիցենզիոն տեղեր, «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» մասնագիտության ընդունելության համար՝ 33 լիցենզիոն տեղեր, «Հարդարման շինարարական աշխտանքների իրականացում» մասնագիտության ընդունելության համար՝ 33 լիցենզիոն տեղեր և «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ընդունելության համար՝ 40 լիցենզիոն տեղեր: Վերջիններս հիմնականում լրացվում են, բացառությամբ «Նախադպրոցական կրթություն», «Հաշվապահական հաշվառում», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր», «Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր», «Կապի միջոցների շահագործում», «Համակարգիչների շահագործում», «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում», «Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» ՄԿԾ-ների:

[3] ՍՏՊՔ ինքնավերլուծություն, էջ 24

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը առաջին անգամն է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «Գրավիչ, մատչելի, հասանելի մասնագիտական կրթությամբ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի պատրաստում և զբաղվածության ապահովում՝ հանուն արժանապատիվ ապագայի»:

Քոլեջի ներկայիս 2019-24թթ ռազմավարական ծրագիրը մշակվել է նախորդ 2014-18թթ ծրագրի փորձառության հիման վրա: Արդյունքում վերանայվել է առաքելությունը, սահմանվել են նոր խնդիրներ: Չնայած ռազմավարական ծրագրի կազմման 2-անգամյա փորձի առկայությանը, քոլեջը դեռ չի մշակել ՌԾ պլան-ժամանակացույց և ՌԾ նպատակները չեն արտացոլվել ստորաբաժանումների պլանների մեջ:

Քոլեջում հաստատված է հաշվետվողականության համակարգ, սակայն վերջին 2 տարիներին մեխանիզմի ոչ արդյունավետ կիրառումը չի նպաստել քոլեջի և առանձին ստորաբաժանումների գործունեության գնահատմանը: Բացակայում են քոլեջի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կայուն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային հավաքագրել և վերլուծել հավաստի տվյալներ, իսկ ռազմավարական վերանայումն իրականացնել ոչ թե ներկայիս իրավիճակային տրամաբանությամբ, այլ խորքային վերլուծությունների հիման վրա:

Որակի ապահովման համակարգի փաստացի բացակայության հետևանքով կառավարչական որոշումների հիմքում չեն դրվել հավաքագրված և վերլուծված հավաստի տվյալներ, ինչի արդյունքում ՌԾ-ում սահմանված խնդիրները մեծամասամբ հնարավոր չի եղել իրականացնել՝ այդ թվում՝ օբյեկտիվ պատճառներով և քոլեջի փաստացի ներուժով պայմանավորված:

Քոլեջում դեռևս չի ներդրվել քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության իրականացման ՊԻԳԲ սկզբունքը, ինչը նաև հանգեցրել է մշտադիտարկման մեխանիզմների և արդյունավետության վերլուծությունների բացակայությանը:

Քոլեջի ղեկավար կազմը կարևորում է որակի ապահովման դերը և դրա զարգացումը, սակայն քոլեջի որևէ գործընթացի կամ ոլորտի արդյունավետության գնահատումներ կամ վերլուծություններ չկան, իսկ որակի ապահովման քաղաքականությամբ սահմանված որևէ ընթացակարգ կամ

մեխանիզմ չի իրականացվում՝ պայմանավորված վերջին տարիներին որակի ապահովման պատասխանատուի հաստիքի թափուր լինելով։

Քոլեջի ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են քոլեջի առաքելությանը, տարածաշրջանի և աշխատաշուկայի պահանջներին։ Դրան նպաստել է նաև քոլեջի դասախոսական կազմի մասնակցությունը մասնագիտությունների ՊԿՉ-ների մշակմանը, որոնց վերանայման արդյունքում համապատասխանաբար փոփոխությունների են ենթարկվել նաև ՄԿԾ-ները։

Ուսանողներին տրվող առաջադրանքները և դրանց գնահատումները հիմնականում իրականացվում են մասնագիտական համատեքստին համապատասխան։ Սակայն մասնագիտական (արտադրական) պրակտիկաների անցկացման ցածր արդյունավետությամբ պայմանավորված՝ առկա է գործող գնահատման համակարգի և ուսումնառության վերջնարդյունքների հետ որոշ խզում՝ քոլեջի առաջնային (համեմատաբար շատ ուսանողներ ունեցող) մասնագիտությունների (ԲԼԱ և ՕՀՀ) դեպքում պրակտիկ հմտությունների ձևավորման մասով։ Պատճառը քոլեջի ռեսուրսների սակավությունն է, թանկարժեք տեխնիկայի (հաստոցներ, համապատասխան տրանսպորտային միջոցներ, ինժեներական սարքավորումներ) գնման հնարավորություն առկա չէ։ Դրա փոխարեն քոլեջը փորձում է խնդիրը լուծել համագործակցող գործատուների ռեսուրսներով, պրակտիկայի կազմակերպմամբ, սակայն պրակտիկաները գործատուների մոտ հիմնականում տարեկան 1-3 օր է անցկացվում, իսկ այդ ընթացքում ռեսուրսներին հասանելիությունը ուսանողների համար խիստ սահմանափակ է։ Մյուս մասնագիտությունների դեպքում քոլեջը ձևավորել է բավարար նյութատեխնիկական բազա։ Չնայած դրան, մասնագիտությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կարիք կա արդիականացնել քոլեջի ռեսուրսային ողջ բազան, սակայն ֆինանսական սուղ հնարավորությունները դա թույլ չեն տալիս։

Քոլեջի կրթական ծրագրերի իրականացման համար ձևավորվել է համեմատաբար կայուն դասախոսական կազմ։ Դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում կիրառվում են դասալսումները, որոնք որոշ դրական ազդեցություն թողել են կրթական գործընթացի բարելավման վրա։ Սակայն քոլեջի ՊԴ կազմը կարիք ունի մասնագիտական և օտար լեզվի վերապատրաստումների անցկացման։ Քոլեջը չունի պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսներ, ինչը սահմանափակում է ուսանողներին պրակտիկ ոլորտից եկող առաջադրանքների տրամադրումը և մասնագիտական աշխատանքային միջավայրի հետ ծանոթացումը։

Քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր։ Քոլեջում դասախոսների և ուսանողների առջև դրված չէ հետազոտական աշխատանքներ իրականացնելու պահանջ։ Դասախոսները ներգրավված չեն որևէ հետազոտական աշխատանքներում, ինչը կարող է հանգեցնել մասնագիտական աճի սահմանափակմանը և միջազգային արդի փորձի ներդրմանը կրթական ծրագրերում։ Որոշ կրթական ծրագրերի առանձնահատկությունից ելնելով՝ երբեմն ուսանողներին տրվող որոշ առաջադրանքներ պարունակում են հետազոտական բաղադրիչ, ինչը սակայն չի տարածվել մյուս կրթական ծրագրերի վրա։

Քոլեջում առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, առավելապես՝ կուրսղեկների ինստիտուտը, ինչը նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը և ուսանող-քոլեջ կապի ամրապնդմանը:

Քոլեջի կարիերայի պատասխանատուն ծանոթացնում է ուսանողներին կարիերայի հնարավորություններին, հետևում է շրջանավարտների գործունեության հետագծին և վերջերս իրականացրել է գործունեության արդյունքների վերլուծություն: Սակայն արդյունքները դեռևս չեն կիրառվում կրթական ծրագրերի շարունակական բարելավման նպատակով:

Քոլեջում ներդրված են թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ: Սակայն այդ մեխանիզմների արդյունավետության բարձրացման և նոր մեխանիզմների (մասնավորապես՝ պաշտոնական կայքէջի) ներդրման անհրաժեշտություն կա, ինչը կնպաստի հասարակության շրջանում քոլեջի կրթական ծրագրերի և կայացված որոշումների մասին իրազեկվածությանը:

Քոլեջն իրացնում է իր հասարակական պատասխանատվությունը՝ արժեքներ ու գիտելիքներ փոխանցելով տարածաշրջանի հասարակության լայն շերտերին:

Հանդիսանալով տարածաշրջանային պետական քոլեջ՝ ՍՏՊՔ-ն հնարավորություն ունի համագործակցել տարածաշրջանի խոշոր գործատուների հետ, արդյունքում ձևավորել է գործատու գործընկերների ընդգրկուն ցանկ, որը նպաստում է կրթական ծրագրերի բարելավմանը և պրակտիկաների կազմակերպմանը: Համագործակցության լայն շրջանակը նպաստում է նաև, որ շրջանավարտներն իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելու հնարավորություն ունենան: Հատկանշական է նաև ակտիվ համագործակցությունը հարևանությամբ գտնվող ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի հետ, որը նպաստում է անհրաժեշտության դեպքում դասավանդող կադրերի համալրմանը և ռեսուրսների համատեղ օգտագործմանը: Քոլեջի միջազգային համագործակցությունը սահմանափակվում է ռեսուրսային բազայի բարելավման համար միջազգային նվիրատվությունների ստացմամբ, որոնք ոչ միշտ են եղել նպատակային, ուղղված քոլեջի հիմնական ՄԿԾ-ների համար բազայի ստեղծմանը: Քոլեջը դեռ պետք է ջանքեր գործադրի նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցության խթանման համար, ինչը կնպաստի հավելյալ ռեսուրսների ներգրավմանը, ուսանողների և դասախոսների շարժունությանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Տարածաշրջանի կարիքներին համապատասխան ՄԿԾ-ների առկայությունը
2) Պետության կողմից ճանաչված գերակա ուղղություններով մասնագետների թողարկումը և այդ մասնագիտություններով շրջանավարտների պահանաջարկը
3) Ուսանողակենտրոն մոտեցման կիրառումը կրթական ծրագրերում
4) Դասախոսական կազմի համեմատաբար կայունությունը
5) Գործատուների և համագործակից բուհերի ընձեռած հնարավորությունները ռեսուրսների բացը լրացնելու համար
6) Գործատուների հետ համագործակցության դինամիկ բարելավումը
7) Առաքելության փոխադարձ կապը տարածաշրջանի կարիքների հետ
8) ՌԾ մշակման փորձի առկայությունը

9) Ուսանողական համակազմի ընդունելության և հավաքագրման մեխանիզմների բարելավումը
10) Ներքին հաշվետվողականության գործող համակարգը
11) Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումների իրականացումը

Հաստատության թույլ կողմերն են.

1) Կրթական ծրագրերում կիրառվող գնահատման համակարգի և վերջնարդյունքների միջև թույլ կապը
2) Քոլեջում գործնական և պրակտիկ հմտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների անբավարար բազան
3) Հետազոտական աշխատանքների թույլ արտահայտվածությունը կրթական ծրագրերում
4) Դասախոսական կազմի մասնագիտական և օտար լեզվի վերապատրաստման անհրաժեշտությունը
5) Ռազմավարական կառավարման փաստացի բացակայությունը
6) ՌԾ-ից բխող երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների բացակայությունը
7) Որոշումների կայացման համար տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմների բացակայությունը
8) Որակի ապահովման համակարգի կիրառման փորձի պակասը
9) Կրթական և այլ կարիքների վերհանման մեխանիզմների սակավությունը
10) Քոլեջի գործընթացների և կրթական ծրագրերի վերաբերյալ թափանցիկության ապահովման համար անհրաժեշտ կայքէջի բացակայությունը
11) ՌԾ-ին համապատասխան տնօրենի հաշվետվության կազմման բացակայությունը
12) Միջազգային կառույցների հետ թույլ համագործակցությունը

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Մշակել ՌԾ պլան-ժամանակացույց՝ սահմանելով հստակ պատասխանատուներ և առաջընթացի գնահատման ցուցիչներ
2) Ներդնել ՌԾ կատարողականի գնահատման մեխանիզմ(ներ), որը թույլ կտա գնահատել ռազմավարական նպատակների իրագործումը
3) Ռազմավարական կառավարման գործընթացում ապահովել գործատուների ակտիվ ներգրավվածություն, ինչը կնպաստի քոլեջի զարգացմանը։
4) Ներդնել քոլեջի գործընթացների և կրթական ծրագրերի վերաբերյալ հավաստի տվյալների հավաքագրման և վերլուծման մեխանիզմներ, դրանց արդյունքները դնել որոշումների կայացման հիմքում
5) Գործընթացների կառավարման հիմքում ներդնել ՊԻԳԲ շրջափուլը

6) Վերանայել որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, և գործնականում ներդնել որակի ապահովման համակարգ
7) Քոլեջի որակի ապահովման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին՝ հիմնվելով հասվաստի տվյալների արդյունքում իրականացված վերլուծությունների վրա։

Որակավորումների արժանահավատ շնորհում

1) Սահմանել ՄԿԾ-ի իրականացման արդյունավետության գնահատման ցուցիչներ, դրանց համապատասխան գործիքակազմ և իրականացնել ՄԿԾ-ների մշտադիտարկումներ, որոնց արդյունքները կնպաստեն ՄԿԾ-ների բարելավման գործընթացի իրականացմանը։
2) Պրակտիկ, գործնական հմտությունների վերջնարդյունքների ամբողջական ապահովման համար ընդլայնել առաջադրանքների բազան, մշակել գնահատման հստակ չափանիշներ և հետևել ուսանողների առաջընթացին՝ պարբերաբար գնահատելով պրակտիկ գործունեության արդյունավետությունը։
3) Միջոցներ ձեռք առնել արտադրական և նախաավարտական պրակտիկաների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, հատկապես քոլեջի հիմնական մասնագիտությունների համար
4) Մշակել գործնական և պրակտիկ հմտությունների, ինչպես նաև հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորմանը միտված հանձնարարականների փաթեթներ/բազաներ՝ ըստ առանձին ՄԿԾ-ների
5) Իրականացնել տեղի կամ միջազգային նմանատիպ կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ լավագույն փորձը ներդնելու և ծրագրերը արդիականացնելու նպատակով
6) Իրականացնել դասավանդող կազմի մասնագիտական վերապատրաստումներ՝ օգտագործելով համագործակցող գործատուների հետ կապերը, այդ թվում՝ կազմակերպել վարպետաց դասեր հրավիրյալ մասնագետների միջոցով
7) Ներդնել դասախոսական կազմի գնահատման և մասնագիտական զարգացմանը նպաստող ընթացակարգեր
8) Դասախոսների և ուսանողների համար ներդնել հետազոտական աշխատանքներ իրականացնելու պահանջ և դրա հիման վրա խրախուսման մեխանիզմներ
9) Ձեռնարկել քայլեր այլընտրանքային ֆինանսական հոսքերի հայթայթման՝ քոլեջի հետագա զարգացումը և կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով
10) Բարերարների կողմից նվիրատվությունների տեսքով ստացվող ֆինանսական միջոցներն ուղղել ըստ նպատակային առաջնահերթության՝ ձեռնարկել քայլեր առաջնահերթ ռեսուրսների լավացման ուղղությամբ։

Երկարաժամկետ զարգացում

1) Ներդնել ՌԾ-ի վրա հիմնված հաշվետվողականության համակարգ և ապահովել հաշվետվությունների հրապարակումը
2) Ապահովել բոլոր ՄԿԾ-երում հետազոտությունների իրականացման բաղադրիչի ներդրումը՝ հետազոտական բնույթի աշխատանքների իրականացման, հստակ սահմանված չափանիշների հիման վրա դրանց գնահատման միջոցով, և խթանել քոլեջում դասախոսների և ուսանողների կողմից հետազոտությունների կատարումը՝ գործընթացում ներգրավելով գործատուներին:
3) Բազմազանեցնել կարիերային նպաստող միջոցառումները՝ ապահովելով կարիերայի պատասխանատու - ուսանող կապի ամրապնդումը
4) Իրականացնել կրթական և այլ կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության գնահատում և անհրաժեշտության դեպքում ներդնել նոր մեխանիզմներ
5) Վերանայել քոլեջի ուսանողական խորհրդի գործունեությունը՝ ապահովելով վերջինիս անկախությունը, համագործակցությունն այլ ՄՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների հետ, իսկ գործունեության հիմքում կարևորել ուսանողների խնդիրների վերհանումը և լուծումներ առաջարկելը
6) Քոլեջի գործընթացների և կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման և թափանցիկության ապահովման համար ստեղծել պաշտոնական կայքէջ
7) Բազմազանեցնել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները
8) Ընդլայնել համագործակցության շրջանակները ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ասպարեզում, ստեղծված կապերն օգտագործել ՄԿԾ-ների բարելավման համար
9) Կազմակերպել քոլեջի ուսանողների և դասավանդող կազմի համար օտար լեզվի հավելյալ պարապմունքներ՝ միջազգայնացումը խթանելու նպատակով:

Փորձագիտական խմբի ղեկավար
Գագիկ Քթրյան

14 հունվարի, 2025թ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[4] կողմից.

1. **Գագիկ Քթրյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի Եվրոպական համալսարանի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի որակի ապահովման բաժնի ղեկավար, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Գայանե Ավետիսյան՝** աշխարհագրական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Նարինե Միրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետն է, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արևիկ Հովհաննիսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Հավատարմագրման գործընթացը համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 28.02.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 02.04.2024թ. Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 31.06.2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[5]:

Նախնական այց

2024 թվականի սեպտեմբերի 23-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, դասալսումներ, ռեսուրսերի[6] դիտարկում, ինչպես նաև փաստաթղթերի դիտարկում[7] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 19.11.2024թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 14.01.2025թ. :

Համակարգող
Լիանա Ալավերդյան

14 հունվարի, 2025թ.

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[7] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Քոլեջ կամ ՄՈՒՀ) առաքելությունը 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ) սահմանված է. «Մատչելի, հասանելի, որակյալ մասնագիտական կրթություն հանուն արժանապատիվ ապագայի», իսկ 2019-2024թթ. ՌԾ-ում Քոլեջի առաքելությունը որոշակիորեն փոփոխվել է՝ ձևակերպվելով. «Գրավիչ, մատչելի, հասանելի մասնագիտական կրթությամբ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի պատրաստում և զբաղվածության ապահովում՝ հանուն արժանապատիվ ապագայի»: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Քոլեջի առաքելությունը ընդունվում է անձնակազմի կողմից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջի առաքելությունը և սահմանված նպատակները որոշակիորեն համապատասխանում են տարածաշրջանի կարիքներին, սակայն Քոլեջը տարածաշրջանի կարիքների վերհանման և աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն չի իրականացրել:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի նպատակը, խնդիրները: Քոլեջի նպատակն է՝ բարձրացնել նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության որակը, կառավարման արդյունավետությունն ու համագործակցությունը սոցիալական գործընկերների հետ, հզորացնել ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները: Նպատակի իրականացման համար Քոլեջը ՌԾ-ում սահմանել է նաև խնդիրներ մի շարք ուղղություններով, սակայն խնդիրների լուծման համար չի կազմել գործողությունների պլան-ժամանակացույց: Միաժամանակ, չնայած Քոլեջի ՌԾ-ի ժամկետն ավարտվում է 2024թ., սակայն սահմանված խնդիրների ուղղությամբ բավականաչափ քայլեր իրականացված չեն: Օրինակ՝ Քոլեջի հիմնանորոգման և վերակառուցման համատեքստում՝ ժամանակակից կրթական պահանջներին և նորարարական մոտեցումներին համապատասխան նոր արհեստանոցների, լաբորատորիաների, մեթոդական և հետազոտական կենտրոնների կառուցումը, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպումը և դուալ համակարգի ներդնումը, նյութատեխնիկական բազայի արդիականացումը՝ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումը, ուսանողների մասնակցությունն ու ներգրավումը ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացում:

Քոլեջի ՌԾ պահանջներից է նաև ներդնել նոր մասնագիտություններ, սակայն դրանք մեծամասամբ չեն ներդրվել, իսկ որոշ ներդրված մասնագիտություններով դիմորդներ չեն հավաքագրվել, մասնավորապես՝ «Ոսկերչություն» ՄԿԾ-ն:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը, իսկ արտաքին շահակիցներն են՝ ՀՀ կառավարությունը, ԿԳՄՍ նախարարությունը, մարզային իշխանությունը, գործատուները, շրջանավարտները, ծնողները: ՌԾ մշակման գործընթացում Քոլեջի կողմից կարիքների վերհանում չի իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ չեն մասնակցել ՌԾ-ի մշակմանը, բացառությամբ մի քանի դասախոսների: Քոլեջը չի իրականացրել ոչ նախորդ, ոչ էլ գործող ՌԾ-ի արդյունքների գնահատում: Այցի ընթացքում պարզվեց, որ նոր ՌԾ-ի մշակման գործընթացում Քոլեջը նախատեսում է ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին, սակայն ներգրավման մեխանիզմները դեռևս չի հստակեցրել: Քոլեջում ՌԾ գնահատման համար ներդրված հիմնական մեխանիզմը հաշվետվողականությունն է, սակայն ոչ բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններն են առկա: Իսկ առկա հաշվետվությունները լիարժեք չեն արտացոլում ՌԾ նպատակների իրագործումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը որոշակիորեն համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջի ՌԾ-ով սահմանված առաքելությունը ընդհանուր առմամբ համահունչ է տարածաշրջանի կարիքներին: Միևնույն ժամանակ աշխատաշուկայի և տարածաշրջանի կարիքների համապարփակ վերլուծության իրականացումը հնարավորություն կտա հստակեցնել առաքելությունը և սահմանված նպատակները: Ինչպես նաև դրա հստակեցումը Քոլեջին հնարավորություն կտա հստակ սահմանել ռազմավարական խնդիրները և դրանց իրականացման արդյունքային ցուցանիշները:

Փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի կողմից սահմանված նպատակներն ու խնդիրները՝ ուղղված կրթական գործընթացների կատարելագործմանը, սակայն գործողությունների պլան-ժամանակացույցի առկայությունը, որը կներառի իրականացման հստակ ժամկետներ, ԳԱՑ-եր և պատասխանատուներ, կնպաստի գործողությունների իրագործմանը: Փորձագիտական խումբը գնահատում է, որ միջին մասնագիտական կրթություն իրականացնելու համար Քոլեջում ներդրված կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ին: Միաժամանակ կարևոր է, որ Քոլեջը փորձում է ներդնել նոր մասնագիտություններ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի ուսումնասիրությունն ու վերլուծությունները կնպաստեն ՄԿԾ-երի շարունակականության ապահովմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը Քոլեջի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում, սակայն ներգրավման հստակ մեխանիզմների և նպատակների առկայության դեպքում շահակիցների կարիքներն ու առաջարկությունները կարող են լիարժեք բացահայտվել, որի հիման վրա գործողությունների պլանավորումը կնպաստի ծրագրի արդյունավետության ու իրագործելիության մակարդակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ ռազմավարական պլանավորման գործընթացում անհրաժեշտ է խորքային գնահատել ընթացիկ ՌԾ-ի իրականացումը՝ բացահայտելով դրա ձեռքբերումներն ու բացթողումները: Այս համատեքստում խումբը շեշտադրում է ՌԾ արդյունքների գնահատման և հաշվետվողականության արդյունավետ մեխանիզմների ներդրման կարևորությունը, ինչը կնպաստի ծրագրի շարունակական բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը գիտակցում է իր առաքելությունը՝ որպես տարածաշրջանային ուսումնական հաստատություն, իր կրթական ծրագրերը և ռազմավարական նպատակները համապատասխանեցնում է տարածաշրջանի կարիքներին, ինչպես նաև այն, որ ներքին և արտաքին շահակիցները որոշակիորեն կիսում են քոլեջի առաքելությունը և հնարավորության սահմանում նպաստում ՌԾ իրականացմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, կառավարման, մանկավարժական, տնօրենական և ուսումնամեթոդական խորհուրդների կողմից:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա ուղղահայաց կապերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կազմակերպական կառուցվածքում ներկայացված Որակի ներքին ապահովման կենտրոնը, որպես այդպիսին բացակայում էր, հաստիքացուցակում ևս առկա չէ: Քոլեջում գործող խորհուրդների և ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է քոլեջի կանոնադրությամբ և համապատասխան կանոնակարգերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստիքային աշխատողները հիմնականում չեն իրականացնում մեկից ավելի վարչական գործառույթներ՝ բացառությամբ տնօրենի պարտականությունները կատարողի, որի վրա դրված են և՝ տնօրենի, և՝ դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, և՛ արտաքին կապերի ու միջազգայնացման, և՛ որակի ապահովման ուղղություններով գործառույթները: Փաստացի վերջին 2 ուղղություններով (արտաքին կապեր և միջազգայնացում, որակի ապահովում) գործառույթներ չեն իրականացվում տնօրենի պ/կ-ի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական համապատասխան պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ

ՌԾ նպատակների իրականացման համար և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել:

Քոլեջը դեռ չի մշակել ՌԾ պլան-ժամանակացույց, և ըստ այդմ ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները պլանավորված չեն: Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատողների աշխատավարձները և հավելավճարները՝ 83.8%, ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը՝ 5.3%, վերջինիցս՝ ուսումնական նյութերի (ապրանքների) համար՝ 1.2%՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը, և այլն:

Դասախոսական և ուսանողական համակազմերը ընդգրկված են կառավարման խորհրդում՝ 20% դասախոսներից և 25% ուսանողներից, բացի այդ դասախոսները ընդգրկված են նաև քոլեջի մանկավարժական, տնօրենական և ուսումնամեթոդական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված դասախոսները և ուսանողները մեծամասամբ նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Կարիքների վերաբերյալ հարցերը հնչեցվում են քոլեջում ղեկավար կազմի հետ այլ ընթացիկ քննարկումների կամ հանդիպումների ժամանակ: Կառավարման խորհուրդը սովորաբար քննարկում է քոլեջի ներկայացրած օրակարգային հարցերը, սեփական նախաձեռնությամբ խնդիրներ չի դնում քոլեջի առաջ: Խորհուրդների նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը անձնակազմի շրջանում տարածվում է նիստերի մասնակիցների կողմից բանավոր կերպով:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Չնայած ռազմավարական ծրագրի կազմման 2-անգամյա փորձի առկայությանը, քոլեջը դեռ չի մշակել ՌԾ պլան-ժամանակացույց և ՌԾ նպատակները չեն արտացոլվել ստորաբաժանումների պլանների մեջ: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Աշխատանքային պլանների դիտարկումը ցույց տվեց, որ նախորդ տարիների պլանավորման համեմատ գործողությունները կրկնվում են: Պլանավորման մեջ չեն ընդգծվում ՌԾ հիմնախնդիրները: Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքները չափելի են և բնութագրում են ստորաբաժանումների ամենամյա ընթացիկ աշխատանքները: Տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլաններում հիմնականում կրկնվող գործողություններ չկան:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև: Վերջին 2 տարիներին ստորաբաժանումների կողմից հաշվետվությունների հավաքագրումը և քոլեջի ամբողջական տարեկան հաշվետվության կազմումը խաթարվել է՝ պայմանավորված նախկին տնօրենի այդ ընթացքում՝ պաշտոնում կարճաժամկետ վերականգնմամբ և կրկին դադարեցմամբ: Ներկայումս տնօրենի պ/կ-ն սկսել է քայլեր ձեռնարկել տնօրենի տարեկան հաշվետվության կազմման ուղղությամբ: Քոլեջի փոքր անձնակազմով պայմանավորված՝ ստորաբաժանումների և պատասխանատուների միջև գործառնական կապերը զարգացած են:

Քոլեջը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ է դիտարկում հաշվետվությունները, որոնց ներկայացումը կանոնակարգվում է քոլեջի կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով: Բացի ստորաբաժանումների կողմից տարեկան ներքին հաշվետվությունների ներկայացումից, քոլեջի կարիերայի պատասխանատուն և գլխավոր հաշվապահը եռամսյակային և կիսամյակային համապատասխան հաշվետվություններ են ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն: Տնօրենի նախորդ 2019թ, 2020թ հաշվետվությունների (որոնք ներկայացված էին ԻՎ փաթեթում) դիտարկումը ցույց է տալիս, որ հաշվետվության մեջ արտահայտված չէ վերլուծական բաղադրիչը, այս մոտեցումը ինստիտուցիոնալիզացված չէ: Քոլեջում ներկայացվող հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, այսինքն, ներկայացնում են կատարված աշխատանքները՝ առանց վերլուծելու դրանց արդյունավետությունը և կապը ՌԾ նպատակների հետ, և առանց խնդիրներ դուրսբերելու:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների վերլուծություն չի կատարվել: Չի վերլուծվել նախորդ կամ գործող 2019-2024թթ ռազմավարական ծրագրի կատարողականը: Ռազմավարական ուղղությունների վերանայման համար խորքային վերլուծություններ չեն իրականացվել:

Քոլեջում որակի ապահովման պատասխանատուի բացակայությամբ պայմանավորված չեն իրականացվել ներքին խնդիրների վերհանմանն ուղղված հարցումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի պատասխանատուն մշակել է էլեկտրոնային հարցաթերթիկներ դասախոսների և ուսանողների կարիքների ուսումնասիրման համար, 2022թ-ին անցկացրել է հարցումը, սակայն արդյունքները չեն հավաքագրվել և վերլուծվել, դրանք չեն ներկայացվել նաև անձնակազմին:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրման նպատակով իրականացվում է կառավարման խորհրդում ընդգրկված անդամների, գործատուների և համագործակցող կառույցների հետ քննարկումների, արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապ ապահովելու միջոցով: Աշխատաշուկայի ուսումնասիրություններ առկա չեն: Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար այլ մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի:

Քոլեջը դեռևս փորձ չի կատարել գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը: Վերջինս ամրագրված չէ քոլեջի կանոնակարգային փաստաթղթերում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում:

Քոլեջում տեղեկատվության հավաքագրման կայուն մեխանիզմներ առկա չեն: Ուսումնական գործընթացների վերաբերյալ ընթացիկ տեղեկատվությունը ներկայացվում է ղեկավար կազմին համապատասխան ստորաբաժանումների կողմից: Այլ տեղեկատվության հավաքագրման համար պատասխանատու ստորաբաժանումներ չկան: Բացառություն է կազմում միայն կարիերայի պատասխանատուն, որը շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներ է հավաքագրում, սակայն, տվյալ հաստիքում վերջերս նշանակված լինելով, դեռ նոր է նախատեսում կանոնակարգել և ակտիվացնել ոլորտում իր աշխատանքները:

Քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման վերլուծությունը և հավաքագրումը գնահատող մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ:

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա միջոցառումները, սակայն մասնավորապես ՄԿԾ-ների, որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերն՝ ուղղված կառավարման ճգնաժամի կարգավորմանը, ինչը կնպաստի քոլեջի ռազմավարական խնդիրների լուծմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում քոլեջում արտաքին կապերի ու միջազգայնացման և որակի ապահովման ուղղություններով հաստիքային պատասխանատուների բացակայությունը, ինչը վտանգում է այդ ուղղություններով քոլեջի ռազմավարական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը քոլեջի կոլեգիալ կառավարման համակարգում, սակայն վերջիններիս թույլ նախաձեռնողականությունը չի նպաստում խնդիրների բարձրացմանը կառավարման խորհրդում և դրանց լուծմանը: Առավել ևս, որ կառավարման խորհրդում ներգրավված են գործատուների ներկայացուցիչներ, որոնք կարող են օգտակար լինել խնդիրների լուծման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում հաստատված հաշվետվողականության համակարգը, սակայն վերջին 2 տարիներին մեխանիզմի ոչ արդյունավետ կիրառումը չի նպաստել քոլեջի և առանձին ստորաբաժանումների գործունեության գնահատմանը:

Փորձագիտական խումբը խիստ կարևորում է քոլեջի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կայուն մեխանիզմների ներդնումը և կիրառումը, ինչը հնարավորություն կտա ռազմավարական ուղղությունների վերանայումը իրականացնել ոչ թե ներկայիս իրավիճակային տրամաբանությամբ, այլ խորքային վերլուծությունների հիման վրա:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում չի ներդրվել քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության իրականացման ՊԻԳԲ սկզբունքը, ինչը նաև հանգեցրել է մշտադիտարկման մեխանիզմների և արդյունավետության վերլուծությունների բացակայությանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև քոլեջում կայացվող որոշումների և իրականացվող գործընթացների վերաբերյալ հրապարակայնության ապահովման ցածր մակարդակը, ինչը կարող է հանգեցնել շահակիցների շրջանում թափանցիկության և վստահության պակասի, ինչպես նաև սահմանափակել նրանց մասնակցությունը Քոլեջի ՌԾ իրականացման գործընթացներում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում փաստացի իրականացվում է իրավիճակային կառավարում, որոշումները հիմնված չեն հավաքագրված տվյալների վրա, կառավարման խնդիրներով պայմանավորված արդյունավետ չի գործում հաշվետվողականության համակարգը, ՊԻԳԲ շրջափուլը ներդրված չէ, առկա է քոլեջում կայացվող որոշումների և իրականացվող գործընթացների վերաբերյալ հրապարակայնության ապահովման ցածր մակարդակ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջն ըստ իրեն տրված լիցենզիաների կարող է իրականացնել առկա և հեռակա միջին մասնագիտական և առկա նախնական մասնագիտական (արհեստագործական) 17 կրթական ծրագրերով ուսուցում: Փորձագիտական այցի ընթացքում քոլեջն իրականացնում էր 7 միջին մասնագիտական և 6 նախնական մասնագիտական կրթական ծրագրերը: Նշված բոլոր մասնագիտություններով ուսուցումը իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով:

Ըստ ԿԳՄՍ նախարարի պաշտոնական թույլտվության /լիցենզիայի/՝ ՍՏՊՔ-ում հեռակա ուսուցում կարող է իրականացվել 4՝ «Բաց լեռնային աշխատանքներ», «Նախադպրոցական կրթություն» «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Հաշվապահական հաշվառում» մասնագիտություններով: Սակայն ներկայումս հեռակա ուսուցումը իրականացվում է միայն «Բաց լեռնային աշխատանքներ» և «Նախադպրոցական կրթություն» մասնագիտություններով:

2023-2024 ուստարում փորձարարական հիմունքներով ներդրվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտությունը, որի համար ըստ քոլեջի հիմնավորման հիմք են հանդիսացել աշխատաշուկայի ուսումնասիրությունները և մասնագիտության արդիականությունը:

Նշենք, որ վերջին տարիներին ընդունելություն կատարվել է միայն «Բաց լեռնային աշխատանքներ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրամսպորտում», «Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում» միջին մասնագիտական կրթական ծրագրերով և «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և շահագործում», «Օգտակար հանածոների հարստացում», «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» նախնական մասնագիտական կրթական ծրագրերով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը չի իրականացրել աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն և արդյունքում նոր բացված ՄԿԾ-երից շատերում այսօր դիմորդ չկա: Մասնավորապես՝ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում» ՄԿԾ-ներում:

2023-24 ուստարում պետության կողմից գերակա ճանաչված մասնագիտություններով («Բաց լեռնային աշխատանքներ», «Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում», «Օգտակար հանածոների հարստացում», «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և շահագործում»)

սովորող ուսանողներին տրվում է 50.000 դրամ կրթաթոշակ, ինչն էլ նպաստել է վերջին 2 տարիներին ընդունելության թվի աճին:

ՍՏՊՔ բոլոր կրթական ծրագրերը մշակվում են ՊԿՉ-ների հիման վրա, և քոլեջի դասախոսական կազմը մասնակցում է ՊԿՉ-ների կազմմանն ու վերանայմանը: Չնայած ՍՏՊՔ-ի 2019-24թթ. ՌԾ-ի խնդիրներում նշված է, որ քոլեջում նախատեսվում է ներդնել դուալ ձևաչափով ուսուցումը, սակայն այն դեռևս չի ներդրվել:

Առարկայական ծրագրերում ներառված ուսումնառության նյութերը կազմվել են ՊԿՉ-ների հիման վրա՝ դասախոսների կողմից: Տեսական և գործնական ժամերի հարաբերակցությունը ընտրված կրթական ծրագրերում տարբեր է, այսպես օրինակ ՕՀՀ ՄԿԾ-ի ուսումնական պլանում հատուկ մասնագիտական առարկաների տեսական ժամերը զգալիորեն գերակշռում են լաբորատոր և գործնական ժամերին՝ կազմելով համապատասխանաբար 77 և 23%, ԲԼԱ ՄԿԾ-ի ուսումնական պլանում՝ 54 և 46%, մինչդեռ ՀԳՆ ՄԿԾ-ի ուսումնական պլանում գերակշռում են գործնական ժամերը՝ կազմելով 72%:

ՍՏՊՔ-ն առաջնորդվում է ՊԿՉ-ով սահմանված մոդուլների ուսումնառության արդյունքներով: ԻՎ զեկույցում ներկայացված է դասընթացի և ուսումնառության արդյունքների քարտեզագրում, որը սակայն չի համապատասխանում ՄԿԾ-ում ներկայացված վերջնարդյունքներին:

Ուսումնասիրվող 3 մասնագիտությունների ուսումնական պլաններում կան նախասիրական առարկաներ, օրինակ՝ ՕՀՀ ՄԿԾ-ում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում», «Ընտանեկան կյանքի նախապատրաստական հիմունքներ» և այլն, ՀԳՆ-ում՝ «Մշակույթի պատմություն», «Վարվելակերպի հիմունքներ», ԲԼԱ-ում «Տարիքային հոգեբանություն», ընդ որում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» առարկան պարտադիր է բոլոր ՄԿԾ-ների համար: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում նախասիրական առարկաներ ներկայումս չեն դասավանդվում: Ուսումնական պլաններում կան նաև ընտրովի առարկաներ, որոնց ծրագրերը մշակելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ առարկան պետք է նպաստի ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ առարկաների ընտրությունը քոլեջում իրականացնում են կա՛մ դասախոսները, կա՛մ տնօրինությունը: Այսպես օրինակ ՀԳՆ ՄԿԾ-ում «Համակարգչային վեկտորային գրաֆիկա» մոդուլը առաջարկել է համապատասխան դասախոսը, որն ընդունվել է տնօրինության կողմից:

Ուսանողների գործնական հմտությունների ձևավորումը հիմնականում իրականացվում է ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների միջոցով: Ուսումնական պրակտիկաները հիմնականում անցկացվում են քոլեջում, իսկ արտադրական և նախաավարտական պրակտիկաները՝ գործատուի մոտ: ՕՀՀ ՄԿԾ-ի ուսանողները համապատասխանաբար իրենց պրակտիկան անցկացնում են 2-րդ, 4-րդ, 6-րդ, ՀԳՆ ՄԿԾ-ի ուսանողները՝ 3-ից 6-րդ, իսկ ԲԼԱ ՄԿԾ-ի ուսանողները՝ 4-ից 8-րդ կիսամյակներում (ներառյալ ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները):

Գործնական հմտությունների կրթական վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման համար քոլեջը օգտվում է գործընկերային ռեսուրսներից, օրինակ ԲԼԱ և ՕՀՀ ՄԿԾ-երի ուսանողներն իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անցկացնում են «Զանգեզուրի

պղնձամոլիբդենային» կոմբինատում, որը սահմանափակվում է մեկ-երկու այցով: Միաժամանակ 2024թ. կոմբինատի հետ վերակնքված պայմանագրով պայմանավորված՝ քոլեջը լիահույս է, որ այսուհետ այդ մասնագիտությունների գծով պրակտիկաներն արդյունավետ կանցկացվեն:

ՀԳՆ ՄԿԾ-ի համար պրակտիկաներն անցկացնում են Զանգեզուր Պրո ՍՊԸ-ում, սակայն այս դեպքում ևս այցերը պրակտիկայի վայրեր քիչ են լինում:

Պրակտիկայի գնահատումը բազմագործոնային է: Ուսումնական պրակտիկաները գնահատվում են դասախոսի կողմից՝ ուսանողների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա: Արտադրական և նախաավարտական պրակտիկաները գնահատվում են տվյալ մոդուլի դասախոսի և պրակտիկայի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի լրացված օրագրի պարտադիր առկայության պայմաններում: Գնահատման բաղադրիչները հետևյալն են. հաճախումներ, տեսական գիտելիքների գործնական կիրառում, կազմակերպչական աշխատանք: Օրագրերում ներկայացվում են միայն պրակտիկայի վայրը, ժամանակահատվածը, կատարած աշխատանքների համառոտ նկարագրական բովանդակությունը, որոնք ուսանողը պետք է գործնականում իրականացնի 4 շաբաթվա ընթացքում: Սակայն փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ օրագրերում առկա չէ վերլուծական, ինքնուրույն իրականացրած աշխատանքների մասին տեղեկատվություն, ինչպես նաև ՕՀՀ և ԲԼԱ ՄԿԾ-երի ուսանողների օրագրերում բացակայում էր պրակտիկայի գնահատականը:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, սակայն փաստացի դա որոշ ՄԿԾ-երում էր արտահայտվում: Օրինակ, ՀԳՆ ՄԿԾ-ի հանձնարարականներում առկա են այնպիսիները, որոնք զարգացնում են ուսանողների ստեղծագործական մտածողությունը՝ գովազդային նյութերի մշակում, վեբ կայքի դիզայն, HTML & CSS-ի միջոցով հավաքել տրված կայքը և այլն:

ՕՀՀ և ԲԼԱ ՄԿԾ-ներում հետազոտական առաջադրանքներ չեն տրվում, իսկ ՀԳՆ ՄԿԾ-ի մասնագիտական դասընթացներում առկա են որոշ հանձնարարականներ, որոնք պարունակում են հետազոտական բաղադրիչ, օրինակ տիպոգրաֆիկայից ուսումնասիրությունների կատարումը: Քոլեջում մոդուլների առաջադրանքները հիմնականում միտված են գիտելիքների ձերքբերմանն ու ամրապնդմանը: Օրինակ՝ ՄԿԾ-երի մոդուլների յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի ավարտին տրվում է գրավոր աշխատանք՝ թեստերի, հարցարանների ձևով, որոնք ներառում են տարբեր առաջադրանքներ՝ ճիշտ և սխալ տարբերակների համապատասխանեցում, բաց թողնված բառերը լրացնելու հարցեր, գրքով աշխատանքներ և այլն:

Քոլեջում դասավանդման և ուսումնառության մեթոդները նույնական են բոլոր կրթական ծրագրերի համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մեթոդների ընտրությունը իրականացնում են դասախոսներն՝ իրենց փորձից և լսարանի ունակություններից ելնելով, օրինակ կիրառվում են դեմոնստրացիայի, Վեննի դիագրամի և այլ ինտերակտիվ մեթոդներ:

ՕՀՀ և ԲԼԱ ՄԿԾ-ների մասնագիտական դասընթացներում հիմնականում կիրառվում է տեսասահիկի միջոցով նյութի ներկայացումը, որն արվում է համապատասխան սարքավորումների մասին որոշակի պատկերացում կազմելու համար: ՀԳՆ ՄԿԾ-ի մասնագիտական դասընթացներում հիմնականում կիրառվում է ցուցադրման մեթոդը:

Քոլեջն ունի «Ուսանողների գիտելիքների, կարողությունների ստուգման, կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորման, պարտքերի մարման և վերահանձնման, ուսանողների կողմից բաց թողած դասաժամերի վերականգնման» ընթացակարգ, որը ներդրվել է 2016թ. և մինչ այսօր որևէ վերանայում չի եղել:

ՍՏՊՔ-ում գործում է ուսանողների գիտելիքների գնահատման 10 միավորային համակարգը: Բոլոր կրթական ծրագրերում ուսանողների գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ), ուսումնառության ավարտին (ամփոփիչ ավարտական ատեստավորում):

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսումնասիրվող ՄԿԾ-ների մասնագիտական մոդուլների գնահատման թերթիկներում առկա են ինչպես տեսական գիտելիքները ստուգող հարցեր՝ ճիշտ պատասխանը նշելու տարբերակով, այնպես էլ գործնական հմտությունները ստուգող հարցեր կամ առաջադրանքներ, սակայն առաջադրանքների գնահատման համար ռուբրիկներ սահմանված չեն:

Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում հիմնականում առկա են տեսական գիտելիքները ստուգող հարցեր, իսկ գործնական հմտությունները ստուգող հարցերը բացակայում են: Նման մոտեցումը ընդունված է ՕՀՀ, ԲԼԱ մասնագիտություններում, իսկ ՀԳՆ մասնագիտության ամփոփիչ հարցաշարերում առկա են ոչ միայն տեսական, այլև գործնական կարողություններն ստուգող առաջադրանքներ: Օրինակ, պատրաստել բուկլետ՝ տալով սահմանները, կազմել բացիկ կետային գրաֆիկայում, նկարներից ստանալ ամբողջական նկար հայելային պատկերով և այլն:

Քոլեջն իր ԻՎ-ում ներկայացրել է ուսումնառության արդյունք - գնահատման մեթոդ կապն արտահայտող աղյուսակ, սակայն գնահատման մեթոդները (թեստային, գործնական աշխատանքներ, բաց հարցերով գրավոր քննություն, հարց ու պատասխան, փոխգնահատում, պորտֆոլիոյի հաշվետվություն, մասնակցություն) գրեթե նույնական են բոլոր մասնագիտությունների բոլոր վերջնարդյունքների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենք են ընտրում գնահատման մեթոդը՝ կախված մոդուլի առանձահատկությունից: Այսուհանդերձ, գնահատման մեթոդները չեն փոխկապակցվում ուսումնառության արդյունքի գնահատման հետ, այլ ցույց են տալիս տվյալ նյութի յուրացումը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են բողոքարկել իրենց գնահատականը փոխելու նպատակով, ինչն ամրագրված է ՄՈՒՀ-ում գործող «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կանոնակարգում, սակայն բողոքարկման դեպքեր քոլեջում դեռևս չեն արձանագրվել:

Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների կողմից եղել են առաջարկներ ՄԿԾ-ների վերանայման վերաբերյալ: Առաջարկություններից որոշները հավանության են արժանացել ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից և արդյունքում 2021թ. վերանայվել են «Բաց լեռնային աշխատանքեր» և «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» մասնագիտությունների ՊԿՉ-ները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտներից մեծամասամբ իրենց մասնագիտությամբ աշխատում են «Նախադպրոցական կրթություն» մասնակագիտական կրթական ծրագրի շրջանավարտները:

Քոլեջն ունի 2014թ. հաստատված «Ակադեմիական ազնվության քաղաքականություն», որտեղ սակայն գրված են միայն փաստաթղթի նպատակն ու խնդիրները, իսկ ակադեմիական ազնվության մեխանիզմները բացակայում են:

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ չունի: ՍՏՊՔ-ն ծրագրային համադրելիություն նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող քոլեջների հետ, ինչպես նաև դրանց արդյունավետության քննարկումներ չի իրականացրել:

ՄՈՒՀ-ում 2014թ. ներդրված է «ՄԿԾ–ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգեր» վերտառությամբ փաստաթուղթը: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ տեղի են ունենում քննարկումներ, որոնց արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ցիկլային հանձնաժողովների նիստերի քննարկմանը: Սակայն որպես ՄԿԾ-երի մշտադիտարկման և գնահատման գործիք ուսանողական հարցումներ չեն իրականացվում, չկան գնահատման արդյունավետության ցուցիչներ (ԳԱՑ-եր), որպես մեխանիզմներ հանդիսանում են միայն քննարկումները:

Քոլեջում ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման նպատակով կիրառվում են նաև մշտադիտարկման և շարունակական վերահսկողության որոշ մեխանիզմներ, օրինակ դասալսումներ: ՄԿԾ-ների մշտադիտարկման գործիք է նաև մասնագիտությունների պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Այդ հաշվետվություններում կարևորվում են կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ նրանց առաջարկությունները, որոնք հիմք են հանդիսանում դրանց հետագա բարելավման համար:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում իրականացվող կրթական ծրագրերով պատրաստվում են ՌԾ-ի նպատակներին համապատասխան մասնագետներ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն արագ փոփոխվող աշխարհում իրականացնում է տարբեր ուղղություններով կրթական ծրագրեր և շարունակում է ավելացնել նոր կրթական ծրագրեր, որոնք համապատասխանում են քոլեջի առաքելությանը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ նոր կրթական ծրագրերի ավելացման և գործող ծրագրերի շարունակականության ապահովման տեսանկյունից կարևոր է տարածաշրջանում աշխատաշուկայի ուսումնասիրությունն ու վերլուծությունը արտաքին շահակիցների ներգրավմամբ, ինչը կօգնի քոլեջին ներդնել արդյունավետ կրթական ծրագրեր, որոնք կբխեն նաև տարածաշրջանի կարիքներից:

Քոլեջում հիմնականում չեն իրականացվում ՊԿՉ-ով նախատեսված նախասիրական դասընթացները, իսկ ընտրովի դասընթացները մասամբ են իրականացնում: Մինչդեռ նախասիրական դասընթացների ցանկի առկայությունը հնարավորություն է տալիս ուսանողների կրթական հավելյալ կարիքների բավարարմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացմանը զուգընթաց, դասախոսների դրական փորձի վերհանումն ու տարածումը կարող են նպաստել ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Վերջնարդյունքների, մասնավորապես՝ գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից,

փորձագիտական խումբը կարևորում է նորարարական մեթոդների կիրառմանը և ամրապնդմանը զուգահեռ շեշտադրել գործնական կարողություններ և վերլուծական միտք ձևավորող առաջադրանքների բազմազանեցումը, դրանց պլանավորումն ու համակարգվածության ապահովումը բոլոր ՄԿԾ-ներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ երկրորդ կուրսից սկսած ուսանողները մասնակցում են տարբեր պասիվ և ակտիվ պրակտիկաների, որոնց համակարգումը իրականացվում է պրակտիկայի բաժնի կողմից: Այնուամենայնիվ ՕՀՀ և ԲԼԱ ՄԿԾ-երի ուսանողները իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկաները համապատասխան գործատուների մոտ չեն անցկացնում, ինչը կարող է խոչընդոտել գործնական հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը՝ իրական աշխատանքային պայմաններում փորձի կուտակմամբ:

Փորձագիտական խումբը կարևորում է պրակտիկաների գնահատման բազմագործոն մոտեցումը: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ պրակտիկայի օրագրերի ընտրված ձևաչափը սահմանափակում է ուսանողի հմտություններն ու կարողությունները ներկայացնող տեղեկատվության խորությունը, ինչը կարող է բացասաբար ազդել պրակտիկայի որակական վերլուծության և ուսանողների առաջընթացի գնահատման վրա:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման գործող կանոնակարգ: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ օբյեկտիվ գնահատման մեթոդներն ու չափանիշները պետք է ուղղված լինեն ոչ միայն գիտելիքի յուրացման ստուգմանը, այլև գործնական կարողությունների գնահատմանը՝ հիմնված համապատասխան առաջադրանքների վրա: Սա կհստակեցնի ինչպես մոդուլների, այնպես էլ պրակտիկաների վերջնարդյունքների գնահատման գործընթացը:

Արժևորելով մասնագիտությունների պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները որպես ՄԿԾ-ների մշտադիտարկման գործիք, փորձագիտական խումբը կարծում է, որ քոլեջը կարող է բավարար հիմքեր ապահովել ՄԿԾ-ների գնահատման և բարելավման համար՝ ընդլայնելով և թիրախավորելով տարբեր շահակիցների շրջանում անցկացվող հարցումների շրջանակը, ստեղծելով գնահատման արդյունավետ ցուցիչներ և համապատասխան գործիքներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և արդյարդյունավետության գնահատման որոշակի մեխանիզմների կիրառումը, սակայն գտնում է, որ դրանց բազմազանեցման անհրաժեշտություն կա, ինչը կբխի ՄԿԾ բարելավման տրամաբանությունից: Խումբը կարևորում է գնահատման արդյունքների կիրառությունը հետագա պլանավորման աշխատանքներում: ՄԿԾ մշտադիտարկման հստակ ընթացակարգերի բացակայությունը թույլ չի տալիս քոլեջին համակարգել առկա մեխանիզմները և բարձրացնել կիրառվող գործիքակազմի արդյունավետությունը:

Այս համատեքստում կարևոր է բենչմարքինիգի ընթացակարգերի մշակումը և ներդրումը քոլեջում, ինչը թույլ կտա ուսումնասիրել, փաստաթղթավորել և տարածել դրական փորձը, այն դարձնել ՄԿԾ բարելավման գործիք՝ նպաստելով ՄԿԾ-ների պարբերական վերանայման և բարելավման մշակույթի տարածմանը, քոլեջում մրցունակ մասնագետի պատրաստմանը և իր առաքելության ամբողջական իրականացմանը:

Գովելի է, որ որոշ գործատուների հետ մշտական հետադարձ կապի շնորհիվ և նրանց կողմից արված գրավոր առաջարկների արդյունքում քոլեջի որոշ ՄԿԾ-ներում արդեն իրականացվել են փոփոխություններ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ քոլեջում դեռևս չի ձևավորվել գործատուների կարիքների վերհանման և ՄԿԾ-ներում դրանք հաշվի առնելու ամբողջական համակարգը: Քոլեջը կարող է առանձին գործատուների հետ իր աշխատանքի դրական փորձը տարածել այլ արտաքին շահակիցների վրա, ինչը կօգնի ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը՝ ապահովելով իրականացվող ՄԿԾ-ների շարունակական բարելավումը, զգալիորեն բարձրացնելով դրանց մրցունակությունը և կառավարման արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք, ըստ վերջնարդյունքների համապատասխանում են ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակին, հիմնականում առկա են մոդուլներին համապատասխան ուսումնառության նյութերը, կիրառվում են ուսանողների գիտելիքները և կարողությունները զարգացնող ուսուցման ձևեր, առաջադրանքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ. մասնավորապես՝ այցեր դպրոցներ, բաց դռների օրեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են տնօրենը, դասախոսները, ուսանողները, ինչպես նաև շրջանավարտները:

Ընդունելությունն իրականացվում է տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան՝ առաջնորդվելով ՀՀ Կրթության մասին օրենքով: Գործընթացը կազմակերպում և իրականացնում է քոլեջի ընդունող հանձնաժողովը և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմը՝ դիմորդների դիմում-հայտերի և փաստաթղթերի հիման վրա:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Բաց լեռնային աշխատանքներ»,

«Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտությունների գծով, որը, ըստ քոլեջի, պայմանավորված է կառավարության կողմից գերակա ճանաչված մասնագիտությունների ուսանողներին տվող կրթաթոշակով:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 358 ուսանող, որից 282-ը առկա, իսկ 76-ը՝ հեռակա ուսուցմամբ: Միայն 2024-25 ուստարում քոլեջ ընդունվել է 157 դիմորդ:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառ են հանդիսացել բացակայությունները: Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջը նախապես զգուշացնում է ուսանողներին և ծնողներին բացակայությունների սահմանված շեմն անցնելու մասին:

Ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է կուրսղեկների օղակի միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում կուրսղեկի ժամը և ՈւԽ նիստերը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տեսանելի չէ կապը վերհանված կարիքների և բարելավման նախատեսված գործողությունների միջև:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում ՈւԽ-ն կարևոր դեր է խաղում քոլեջում, այն իրավունքների պաշտպանության համար գործող մարմին է, որն ուսանողների հուզող հարցերը բարձրաձայնում է: Օրինակ, ՈւԽ-ի կողմից բարձրաձայնվել է քոլեջում առկա ջեռուցման խնդիրը: Չնայած այդ ուղղությամբ ղեկավար կազմը փորձել է քայլեր ձեռնարկել՝ սակայն խնդիրը դեռ առկա է: Բացի այդ, ուսանողների կողմից ՈւԽ-ում բուֆետի անհրաժեշտության հարցն է քննարկվել, որը դեռ լուծում չի ստացել:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզվի կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին օտար լեզվի հետ կապված, պատասխանելու նրանց հարցերին: Ուսանողները մասնակցում են «Արմաթ» ինժեներական լաբարատորիայի աշխատանքներին, ինչպես նաև Քոլեջում իրականացվել է «Ներգրավված քաղաքացի» դասընթացը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, քոլեջում առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց, սակայն ուսանողներն ազատ են դիմելու իրենց հուզող հարցերով: Քոլեջը հարցման միջոցով 2020թ–ին գնահատել է վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, սակայն հարցումների վերլուծություն դեռևս իրականացված չէ:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի պատասխանատուի հաստիք: Կարիերայի պատասխանատուն թափուր տեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանցմամբ է զբաղվում, տեղեկատվություն է տրամադրում դիմորդներին քոլեջում առկա մասնագիտությունների մասին: Կարիերայի կենտրոնը տարեկան մեկ անգամ ԿԳՄՍ նախարարություն հաշվետվություն է ներկայացնում շրջանավարտների զբաղվածության մասին:

Քոլեջը կնքել է շուրջ 15 համաձայնագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Կարիերայի

պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարիերայի պատասխանատուի օժանդակությամբ: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2022-2023 ուս տարում 81 շրջանավարտներից 13-ը շարունակել են ուսումը բուհերում, 7–ը զորակոչվել են բանակ, 30–ը աշխատում են իրենց մասնագիտությամբ, 16–ը՝ ոչ իրենց մասնագիտությամբ, մնացած 15-ը չեն աշխատում: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Նախադպրոցական կրթություն» և «Բաց լեռնային աշխատանքներ» կրթական ծրագրերի շրջանավարտները («Բաց լեռնային աշխատանքներ» (և՛ առկա, և՛ հեռակա ուսուցմամբ) ԿԾ-ի ուսանողների մոտ 42%-ը աշխատանքի են անցել իրենց մասնագիտությամբ, այլ մասնագիտությամբ՝ մոտ 17%-ը, «Նախադպրոցական կրթություն» (և՛ առկա, և՛ հեռակա ուսուցմամբ) ԿԾ-ի ուսանողների 48%-ը աշխատանքի են անցել իրենց մասնագիտությամբ, այլ մասնագիտությաբ՝ մոտ 28%-ը, իսկ «Օգտակար հանածոների հարստացում» ԿԾ-ի ուսանողները չեն աշխատում իրենց մասնագիտությամբ, բայց ուսանողների մոտ 17%-ը աշխատում են այլ մասնագիտությամբ)*:* Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար չի թարմացնում շրջանավարտների բազան:

Ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանը նպաստելու համար ուսանողներին տարբեր մոդուլների շրջանակներում հանձնարարվում են ինքնուրույն աշխատանքներ, օրինակ՝ նախադպրոցական կրթության ուսանողները ինքնուրույն տիկնիկներ են պատրաստում, ինչպես նաև դասախոսները հանձնարարում են զվարճալիքներ գրել, բեմադրություններ իրականացնել մանկապարտեզում և այլն: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր առաջադրանքների կատարման մեջ հիմնականում նկատվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:

Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈւԽ-ի նիստերի ժամանակ քննարկվում է քոլեջում տարբեր մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպումը: ՈւԽ-ի կողմից գրողների ծննդյան օրերին միջոցառումներ և մրցույթներ են կազմակերպվում: Պատմության թեմայով դասախոսների կողմից կազմակերպվել են միջոցառումներ, որոնց աջակցել է նաև ՈՒԽ-ն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՈՒԽ աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները սակավ են:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը չի գնահատվում: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են քոլեջի ջեռուցմանը, բուֆետի բացակայությանը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողների հավաքագրման նպատակով քոլեջի իրականացվող այցերը դպրոցներ և բաց դռների օրերը, սակայն կարիք կա արդյունավետության գնահատման մեխանիզմներ ներդնել՝ ապագայում դիմորդների քանակի հետագա ավելացումը խթանելու համար:

Փորձագիտական խումբը կարևորում է ուսանողների կրթական կարիքների գնահատման մեխանիզմները, որոնք իրականացվում են կուրսղեկների կողմից, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կարիք կա բարելավելու ուսանողների կարիքների վերհանման և դրանց հետագա կիրառման մեխանիզմները, ինչը կապահովի ուսումնական գործընթացի որակի շարունակական բարձրացումը:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջում նախատեսված են նախաքննական խորհրդատվություններ՝ հստակ ժամանակացույցով, ինչը նպաստում է ուսանողների պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Այնուամենայնիվ, խումբը նկատում է, որ օտար լեզվի կարողությունների զարգացման ուղղությամբ ուսանողների համար առանձին լրացուցիչ պարապմունքների բացակայությունը կարող է սահմանափակել նրանց մասնագիտական և անձնական առաջընթացի հնարավորությունները: Չնայած որ դասախոսները պատրաստակամ են աջակցել օտար լեզվին առնչվող հարցերով, այնուամենայնիվ ավելի համակարգված մոտեցումը կարող է ապահովել ուսանողների լեզվական հմտությունների կայուն զարգացում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում կարիերայի աջակցման ծառայության առկայությանը և ուսանողների զբաղվածության տվյալների հավաքագրման վերաբերյալ վերլուծությունների իրականացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից շրջանավարտների բազայի ոչ պարբերաբար թարմացումը կարող է խոչընդոտ հանդիսանալ շրջանավարտների հետադարձ կապի ապահովման և զբաղվածության ավելի խորը վերլուծությունների համար: Ինչպես նաև, խումբը գտնում է, որ ուսանողների զբաղվածության տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմների ավելի ակտիվ կիրառումը կարող է նպաստել շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մասին հստակ պատկերացում ձևավորելուն, փորձագիտական խումբը կարծում է, որ մեխանիզմների վերանայումը կնպաստի խնդիրների և հնարավորությունների բացահայտմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում գործում է ուսանողական խորհուրդը, որը նախաձեռնում է տարատեսակ միջոցառումներ՝ ուսանողների ժամանցն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ, ՈւԽ-ի դերակատարությունը ուսանողների իրավունքների պաշտպանության գործում և դրա աշխատանքների արդյունավետությունն ու իրազեկման մակարդակը ուսանողների շրջանում դեռևս բարելավման կարիք ունեն: ՈւԽ-ի աշխատանքների ավելի լայն ներկայացումը և ուսանողական իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցերի ավելացումն այնպիսի նիստերի օրակարգերում, որտեղ ուսանողները հնարավորություն կունենան ներկայացնել իրենց հուզող խնդիրները, կարող են նպաստել ՈւԽ-ի աշխատանքների արդյունավետության և տեսանելիության բարձրացմանը:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների որակի ապահովման գործընթացի բացակայությունը թույլ չի տալիս քոլեջին բացահայտել բարելավման կարիք ունեցող կետերը, ապահովել ուսումնական միջավայրի շարունակական բարելավում: Որակի ապահովման մեխանիզմների ներդրումը հնարավորություն կտա քոլեջին

հետևողականորեն գնահատել և բարելավել ուսանողների համար մատչելի ծառայությունների մակարդակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՍՏՊՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմներ, կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, գործում է իրավունքների պաշտպանության մարմին, առկա են խորհրդատվությունների տրամադրման մեխանիզմներ, վարչական աշխատակազմը բաց է ուսանողների մոտ հարցեր և խնդիրներ առաջանալու դեպքում, 4-րդ չափանիշը գնահատվում է դրական:

Եզրակացություն: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ 2019-2024թթ ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև խնդիր է դրել զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները և հզորացնել մարդկային ռեսուրսները՝ կառավարման համակարգի միջազգային փորձի ներդրման, դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների շարունակական վերապատրաստման միջոցով: Համաձայն ինքնավերլուծության՝ դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է ըստ մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգի, որը հաստատված է 2018թ.: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար մրցույթ անցկացվել է մասնավորապես վերջին տարիներին: Վերջին երկու տարիներին մրցույթի մասնակցել է 2 թեկնածու: Համաձայն ընթացակարգի՝ մրցույթն անցկացնում է մրցութային հանձնաժողովը, որը ստեղծվում է տնօրենի կողմից: Ընթացակարգում նշված է մրցույթի անցկացման թեստավորման և հարցազրույցի փուլերի մասին, սակայն այցից պարզվեց, որ մրցույթը հիմնականում անցկացվում է հարցազրույցի միջոցով, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Մրցույթի հարցաշարը կազմվում է քոլեջի մասնագետների կողմից:

Փորձագիտական այցից պարզվեց նաև, որ մրցույթներ հիմնականում իրականացվում են դասախոսների և վարպետների համար, ՈՒՕ կազմի աշխատանքի ընդունման համար մրցույթ չի անցկացվում:

2024-2025 ուստարում Քոլեջում դասավանդում են 39 դասախոս, որոնցից 4-ը՝ համատեղությամբ, 2-ը՝ ժամավճարային, իսկ պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսներ Քոլեջը չունի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը շրջանավարտ-դասախոսներ ևս չունի: Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսի առջև դրված են մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջներ, որոնք ամրագրված են ՊԿՉ-ով կրթական ծրագրերին

ներկայացվող պահանջներում և դասախոսի հետ կնքված պայմանագրերում: Յուրաքանչյուր մասնագիտության համար դասախոսներ ընտրելիս քոլեջը հիմնվում է մրցույթի արդյունքների վրա՝ կարևորելով մասնագիտական կրթությունն ու դասավանդման փորձը:

Քոլեջի դասախոսներն ունեն բարձրագույն կրթություն և մեծ մասը՝ մագիստրոսի աստիճան, իսկ միջին մասնագիտական կրթություն ունեցող՝ 1 դասախոս: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին, սակայն առկա են դեպքեր, երբ կադրերի բացակայության պատճառով որոշ մոդուլներ դասավանդում են հարակից մասնագիտությամբ մասնագետներ, օրինակ՝ մաթեմատիկայի մասնագետը դասավանդում է նաև «Գեոդեզիական աշխատանքների կատարման կարողություններ», «Մակշեյդերական աշխատանքների կատարման կարողություններ» մոդուլները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ կան մինչև 7 մոդուլ և/կամ առարկա դասավանդող դասախոսներ:

Քոլեջն ունի պաշտոնի նկարագրեր, որոնցում նույնպես նշված է վարչական, ՈՒՀՕ կազմին ներկայացվող պահանջները՝ կրթությունը, որակավորումը, սակայն դրանք ամբողջական չեն: Օրինակ, դասախոսի պաշտոնի նկարագիրը բացակայում է՝ չնայած սահմանված պահանջների առկայության:

Քոլեջում առկա չէ դասախոսների գնահատման կանոնակարգ կամ ընթացակարգեր, դասախոսի գնահատման միակ մեխանիզմը դասալսումն է: Քոլեջում առկա են դասալսման ձևաթղթեր, որոնք ներառում են դասի նկարագրությունը, թույլ և ուժեղ կողմերը: Իրականացվում են նաև փոխադարձ դասալսումներ: Առկա է նաև դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց: Վերջին 2 տարիներին ձևաթուղթը վերանայվել է, նոր ձևաթղթով սահմանված բաղադրիչների համար միավորներ են նշանակվում դասալսման ժամանակ, սակայն արդյունքների վերլուծություն չի կատարվում:

Դասալսման արդյունքները քննարկվել են դասախոսների հետ ամբիոններում, ցիկլային հանձնաժողովներում և արձանագրվել: Քոլեջը ինքնավերլուծությունում դասավանդողների գնահատման համատեքստում անդրադարձել է նաև հարցումներին, որոնք նպաստում են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի պարբերական գնահատում հարցումների միջոցով քոլեջում չի իրականացվում, միաժամանակ Քոլեջը որպես թույլ կողմ արձանագրել է դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների անկատարությունը:

Նշված մեխանիզմների կիրառման արդյունքում դրական փորձի վերհանման և տարածման դեպքերը սակավ են, միայն դասալսման դեպքում են առկա որոշ մեթոդական բարելավումներ: Նախորդ տարիներին քոլեջն ունեցել է դասախոսական կազմի խրախուսման փորձ շնորհակալագրերի կամ ֆինանսավորման ձևով, սակայն հստակ չափանիշներ սահմանված չեն եղել:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար, սակայն Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին (մոտավորապես՝

կազմի 90%)։ Կան նաև նախադեպեր, երբ ՊԴ ներկայացուցիչներ մասնակցել են սեփական նախաձեռնությամբ միջազգային կամ տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումներին կամ մասնագիտական զարգացման համար նախատեսված դասընթացներին, օրինակ ՀԱՊՀ-ում 2 դասախոս մասնակցում է վերապատրաստումների վեբ կայքերի ձևավորման վերաբերյալ։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսական կազմն ունի մասնագիտական վերապատրաստման կարիք։

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի։ ՊԴ կազմի 40%-ը ունի մինչև 10 տարվա աշխատանքային ստաժ։ Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 46-ն է։ Քոլեջը կայունության ապահովման նպատակով չունի դասախոսների պահուստային բազա։ Վերջին մի քանի տարվա ընթացքում դասախոսների թիվը 7-ով նվազել է։ Այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսների՝ Քոլեջից դուրս գալու հիմնական պատճառը ցածր աշխատավարձն է։

Կան մասնագիտության կրթական ծրագրեր, որոնց մասնագիտական կրթաբլոկը դասավանդում են 2-3 դասախոս։ Օրինակ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ն։ Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում։ Որոշ դեպքերում մասնագետների բացակայության պարագայում դասախոսական կազմը համալրվում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոսական կազմով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը, սակայն դեռևս ակնառու օրինակներ առկա չեն։ Քոլեջում գործող ամբիոնները և ցիկլային հանձնաժողովները աջակցություն են ցուցաբերում մասնավորապես սկսնակ մասնագետների շարունակական ուսուցման և կայացման հարցերում, ապահովում են անհրաժեշտ պայմաններ և օգնություն, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն.

Համաձայն ինքնավերլուծության՝ Քոլեջը 2024թ. դրությամբ ունի 6 վարչական և 9 ուսումնաօժանդակ աշխատող։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ առկա կազմը դեռևս բավարար չէ ՌԾ նպատակների ամբողջական իրականացման համար։ Սակայն բոլոր հաստիքները համալրված են՝ բացառությամբ տնօրենի, որակի ապահովման պատասխանատուի և մեթոդիստի, իսկ միջազգայնացման և որակի ապահովման գործառույթները մասնագետի բացակայության պատճառով դրված են տնօրենի ՊԿ-ի վրա։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների ընտրության գործընթացը սահմանված է մրցութային կարգով՝ հաշվի առնելով որակավորումը, դասավանդման փորձը, ինչը հնարավորություն է ընձեռում ներգրավել ոլորտի մասնագետներին։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջում հաշվի են առնվում կրթական ծրագրերի իրականացմանը համապատասխան սահմանված դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, սակայն միաժամանակ կարևոր է գործատու դասախոսների ներգրավման համար հնարավորությունների ստեղծումը, ինչը կնպաստի ուսանողների մոտ գործնական հմտությունների զարգացմանը։ Քոլեջի՝ ավելի բարձր որակավորում ունեցող դասախոսական, վարչական և ՈՒՀ կազմերով համալրումը կամ կադրերի

պարբերական վերապատրաստումները կնպաստեն Քոլեջի ՌԾ նպատակների և ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը:

Փորձագիտական խումբն շեշտադրում է դասախոսական կազմի պարբերական գնահատման և կարիքների վերհանման քաղաքականության և ընթացակարգերի առկայության կարևորությունը, ինչը կարող է նպաստել դասախոսների գործունեության գնահատմանը, կարիքների վերհանմանը և դրա հիման վրա շարունակական մասնագիտական զարգացման պլանավորմանը: Այս տեսանկյունից կարևոր է կիրառվող մեխանիզմի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը, ընդգծելով մասնագիտական վերապատրաստումների կարիքը Քոլեջում, կարևորում է նրանց մասնագիտական զարգացմանը միտված միջոցառումների ընդլայնումն ու նոր ուղիների որոնումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում առկա է կայուն դասախոսական կազմ, որը ապահովում է ՄԿԾ-ների շարունակականությունը, սակայն միաժամանակ ընդգծում է դասախոսների մոտիվացիայի բարձրացման համար նրանց խրախուսման քաղաքականության վերանայումը՝ խրախուսման համար հստակ չափանիշների մշակման հիմքով, ինչը կխթանի նրանց մասնագիտական զարգացումը:

Փորձագիտական խումբը ընդգծում է նաև ՌԾ բոլոր ուղղություններով գործընթացների այնպիսի բաշխումը վարչական և ՈՒՕ կազմերի միջև, ինչը կնպաստի ՌԾ բոլոր ուղղությունների համաչափ զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում գործում է մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, ձևավորվել է համեմատաբար կայուն համակազմ, ունի ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ վարչական, դասախոսական և ՈՒՕ կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտական բաղադրիչը դրված չէ քոլեջի գործունեության հիմքում և արտացոլված չէ ՌԾ-ում և ՄԿԾ-ներում:

Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության իրականացման համար որևէ քաղաքականություն սահմանված չէ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ չնայած հետազոտության բաղադրիչը սահմանված չէ որևէ հանձնարարականի համար, ռեֆերատներ, կուրսային ու դիպլոմային աշխատանքներ չեն հանձնարարվում, սակայն որոշ առաջադրանքներ պարունակում

են հետազոտական բաղադրիչ, որը բխում է մասնագիտական կրթական ծրագրի առանձնահատկությունից, օրինակ, «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ի շրջանակում Տիպոգրաֆիկա առարկայից՝ տառատեսակների ուսումնասիրությունները: Հետազոտական բնույթի աշխատանքներ են ներառում նաև ուսումնական պրակտիկայի ընթացքում տրված առաջադրանքները, որոնք ներառվում են պրակտիկայի հաշվետվություններում: Օրինակ՝ «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ի շրջանակում ուսումնասիրում են արվեստի ճյուղերը, եռաչափ մոդելավորման տեխնոլոգիաները, գովազդային նյութերի մշակման ձևերը, էրգոնոմիկայի համակարգը և այլն: «Բաց լեռնային աշխատանքներ» ՄԿԾ-ի ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները դասախոսների վերահսկողությամբ լուծում են հաշվարկային խնդիրներ, վերջում ներկայացնում հաշվետվություն:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների և ուսանողների առջև դրված չէ հետազոտական աշխատանքներ իրականացնելու պահանջ: Դասախոսները ներգրավված չեն որևէ հետազոտական աշխատանքներում, չունեն տպագրված հոդվածներ կամ ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ: Դասախոսական կազմը նաև հետամուտ չէ մասնագիտական ոլորտում ուսումնասիրելու միջազգային փորձը: Տարիներ առաջ միայն մեկ դասախոս է ձեռնարկ հրատարակել, ով այլևս չի աշխատում Քոլեջում: Հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ հետազոտական բաղադրիչը արտահայտվի քոլեջի թե ՌԾ-ում, թե ՄԿԾ-ներում, և թե հանձնարարվող առաջադրանքներում, որը կնպաստի ոլորտի հստակ ու պլանավորված զարգացմանը: Սա հատկապես կարևոր է այն տեսակետից, որ հետազոտական աշխատանքները կնպաստեն ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, դասախոսների համար հնարավորություններ կստեղծեն միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և տեղայնացման համար:

Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ոչ միայն հետազոտական ուղղությունների սահմանումը, այլև նախագծերի կամ հետազոտական ուղղվածությամբ ծրագրերի իրականացումը, ինչը կխթանի դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեությունը Քոլեջում:

Քոլեջում ընթացող ուսումնական գործընթացի դիտարկմամբ փորձագիտական խմբի համար ակնառու է, որ Քոլեջը, մասնավորապես դիտարկված ՄԿԾ-ների ուղղությամբ, պայմանավորված տարածաշրջանի առանձնահատկություններով, ունի հնարավորություններ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, ինչը սակայն Քոլեջի կողմից հաշվի չի առնվել: Դրական է, որ որոշ առաջադրանքներում կան ուսանողների ստեղծագործական կարողությունները զարգացնող բաղադրիչներ, սակայն Քոլեջը կարիք ունի դրանք սահմանելու, համակարգելու, ընդլայնելու և դարձնելու նպատակային՝ ուժեղացնելով հետազոտական բաղադրիչը և այն տարածելով բոլոր ՄԿԾ-ների վրա: Քոլեջը կարիք ունի նաև սահմանելու հետազոտական աշխատանքներ իրականացնելու, գնահատելու ձևեր և մեթոդներ, ինչը հնարավորություն կտա զարգացնել ուսանողների վերլուծական մտածողությունը:

Բացի այդ, դասախոսների պասիվությունը հետազոտական և վերլուծական աշխատանքներում ներգրավելուն, կարող է հանգեցնել մասնագիտական աճի սահմանափակմանը:

Միջազգային փորձի ուսումնասիրության և հետազոտությունների արդյունքների կիրառումը դասընթացներում կնպաստի կրթական ծրագրերի արդիականացմանը:

Միաժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը պետք է փնտրի լրացուցիչ ֆինանսական միջոցներ հետազոտական ուղղության զարգացման համար՝ ներդնելով խրախուսման մեխանիզմներ, որն էլ կնպաստի այս ուղղության զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը չի սահմանել հետազոտական ուղղություններ, դասախոսական և ուսանողական կազմը ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, առկա չեն հետազոտությունը և զարգացումը խրախուսող քաղաքականություն, ընթացակարգեր, ոչ բոլոր ՄԿԾ-ներում է առկա հետազոտական և վերլուծական առաջադրանքներ, փորձագիտական խումբ գտնում է, որ Քոլեջը չի բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2019-2024թթ. ՌԾ-ի խնդիրներից է՝ «1. Քոլեջի հիմնանորոգում և վերակառուցում՝ շենքայի պայմանների բարելավում, ժամանակակից կրթական պահանջներին և նորարական մոտեցումներին համապատասխան նոր արհեստանոցների, լաբորատորիաների, մեթոդական և հետազոտական կենտրոնների կառուցում», «7. Նյութատեխնիկական բազայի արդիականացում՝ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ», «11. Ֆինանսական միջոցների /ոչ պետական/ ներգրավում»:

Քոլեջն ունի 3735.5 մ^2 ընդհանուր մակերեսով տարածք: Քոլեջն ունի 4 հարկանի 1 մասնաշենք, 14 լսարան, 7 լաբորատորիա (որոնք անհրաժեշտության դեպքում օգտագործվում են նաև որպես լսարաններ), 7 արհեստանոց, գրադարան, արխիվ, բուժկետ, նկուղային հարկում տեխնիկական նշանակության այլ տարածքներ՝ ապաստարան, հրաձգարան: Առկա չէ բուֆետ, իսկ փակ մարզադահլիճը շահագործման ենթակա չէ և կարիք ունի հիմնանորոգման: Քոլեջը 2024թ. հուշագիր է կնքել հարևանությամբ գնտվող ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի հետ, որով քոլեջի ուսանողները հնարավորություն են ստացել վատ եղանակային պայմաններում ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներն անցկացնել ՀԱՊՀ մարզադահլիճում:

Արհեստանոցների մեծ մասը (վարսահարդարման, ոսկերչության, եռակցման, խոհարարական գործի, հյուսն-ատաղձագործական) ստեղծվել են «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» հիմնադրամի բարեգործական նվիրատվությունների միջոցով և նախատեսված են միայն կազմակերպվող կարճաժամկետ դասընթացների համար: Դրանց մի մասի տեխնիկական ռեսուրսները, նպատակային չեն օգտագործվում, կամ փաթեթավորված են և չեն օգտագործվում ընդհանրապես:

Համակարգչային լսարանները 3-ն են (այդ թվում՝ համակարգչային օպերատորության հիմունքների լաբորատորիան և համակարգիչների շահագործման արհեստանոցը), որոնք ընդհանուր առմամբ պարունակում են 20 համակարգիչ, որոնց մի մասը տեխնիկապես հնացած են, տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն: Քոլեջում գործում է նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, որտեղ տեղադրված են 8 ժամանակակից համակարգիչներ և 1 եռաչափ տպիչ-սարք:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի քիմիայի, կենսաբանության, բնագիտության լաբորատորիա և ֆիզիկայի, էլեկտրատեխնիկայի լաբորատորիա: Քիմիայի լաբորատորիայում ֆինանսական սակավ հնարավորություններով պայմանավորված քիմիական նյութերի պակաս կա, իսկ օդափոխության համակարգը չի գործում:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 20.034 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն, վերջինս՝ 14.547 միավոր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Գրադարանը թվայնացված չէ: Առկա մասնագիտական-տեխնիկական գրականությունը հին է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները առավելապես SS մասնագիտությունների դեպքում: Քոլեջի առաջնային մասնագիտություններ հանդիսացող «Բաց լեռնային աշխատանքներ» և «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտությունների պրակտիկ հմտություններ ապահովող վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ սարք սարքավորումների և թանկարժեք հաստոցների, տեխնիկայի գնման հնարավորություն առկա չէ, փոխարենը քոլեջը փորձում է խնդիրը լուծել համագործակցող գործատուների ռեսուրսներով, պրակտիկայի կազմակերպմամբ: Սակայն պրակտիկաները գործատուների մոտ հիմնականում տարեկան 1-3 օր է անցկացվում, իսկ այդ ընթացքում ռեսուրսներին հասանելիությունը ուսանողների համար խիստ սահմանափակ է: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ քոլեջի ղեկավարությունը գիտակցում է խնդրի կարևորությունը և ներկայումս համագործակցության շրջանակները փորձում են ընդլայնել պրակտիկաներն ավելի արդյունավետ և նպատակային կազմակերպելու համար:

Քոլեջի կարիերայի կաբինետում տեղադրված է սմարթ գրատախտակ: Համակարգչային տեխնիկայի վերջին համալրումն իրականացվել է 2022թ-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում, երբ ձեռք է բերվել 10 համակարգիչ և 1 տպիչ սարք: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի առանձին լսարանների որոշ բարելավումներ՝ «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» հիմնադրամի բարեգործական նվիրատվությունների միջոցով:

Քոլեջի 2023թ-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի տվյալների համաձայն՝ ընդհանուր ծախսերի 83.8%-ը բաժին է ընկնում աշխատանքի վարձատրության ֆոնդին, ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը՝ 5.3%, սոցիալական նպաստները՝ 10.8%, և այլ ծախսերը՝ 0.1%: Հետպատերազմյան շրջանում տարածաշրջանում բնակչության թվի նվազմամբ պայմանավորված նվազել է նաև քոլեջին տրվող պետական ֆինանսավորումը, որի արդյունքում,

օրինակ, 2022թ-ի վերջին ամիսներին խնդիրներ են առաջացել անձնակազմին աշխատավարձի տրամադրման հարցում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: Կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար որոշ արհեստանոցներ ստեղծվել և տեխնիկապես հագեցվել են «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» հիմնադրամի բարեգործական նվիրատվությունների միջոցով: 2023թ. քոլեջի բյուջեի եկամուտների 94%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 6%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ, որոնց շրջանակներում պատրաստում են եռակցող, ոսկերիչ, վարսահարդար, խոհարար, հյուսն-ատաղձագործ: Այդ ծրագրերից ոչ բոլորով են խմբեր հավաքվում, վերջին տարիներին միայն եռակցման, խոհարարական և վարսահարդարման խմբեր են եղել, իսկ ներգրավված մուտքերը հիմնականում ուղղվում են համապատասխան ուսուցանող վարպետների հրավիրման ծախսերին:

Քոլեջում հաստատված է «Ռեսուրսների բաշխման ընթացակարգ»: Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն արձանագրվել է՝ 2023-2024 ուստարվանից հեռակա ուսուցմամբ «Բարձր լեռնային աշխատանքներ» մասնագիտության ուսման վարձը 100.000-ից բարձրացվել է 150.000 դրամ, իսկ «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության դեպքում՝ 80.000-ից դարձել է 100.000 դրամ: Քոլեջի հիմնավորմամբ դա իրականացվել է ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, որի համար քոլեջում նշանակված է պատասխանատու անձ: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային կամ էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ՝ հերթափոխով աշխատող 4 պահակներով, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ՝ 8 տեսախցիկով, որից 1-ն անսարք, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2 ուսանող: Բացակայում են թեքահարթակները և տվյալ ուսանողների ծնողներն իրենք են ապահովում նրանց շարժը քոլեջում:

Որպես ապաստարան հատկացված տարածքը բարելավման կարիք ունի:

Քոլեջը չի իրականացրել ռեսուրսներից բավարարվածության գրավոր հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, և գոհունակության արդյունքներ առկա չեն: Ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ ուսանողները և դասախոսները կարծիք են հայտնում ղեկավար կազմի հետ հանդիպումների ժամանակ: Փորձագիտական այցի ժամանակ ուսանողները և դասախոսները հայտնեցին, որ քոլեջի շենքային, լսարանային, այդ թվում՝ ջեռուցման համակարգի, և մարզադահլիճի պայմաններից ունեն ցածր բավարարվածություն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերն՝ ապահովելու ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, չնայած այն հանգամանքին, որ առկա ֆինանսական միջոցները սուղ են նույնիսկ հաստիքացուցակով նախատեսված անձնակազմի վարձատրության համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ չնայած առկա ռեսուրսային պայմաններին, քոլեջն օրինակ SS մասնագիտության դեպքում նյութատեխնիկական բացը լրացնում է համագործակցող գործատուների բազայով՝ պրակտիկ դասընթացների կազմակերպմամբ: Սակայն քոլեջի առաջնային (համեմատաբար շատ ուսանողներ ունեցող) մասնագիտությունների (ԲԼԱ և ՕՀՀ) դեպքում մտահոգիչ է այն, որ համապատասխան ռեսուրսների սակավությունը քոլեջում վտանգում է գործնական, պրակտիկ հմտությունների ձևավորմանը: Արդյունքում քոլեջի տրամադրած կրթությունը հիմնականում տեսական բնույթ է կրում, ինչը փորձագիտական խմբի հետ հանդիպման ժամանակ փաստեց նաև քոլեջի անձնակազմը:

Քոլեջի ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս արդիականացնել ռեսուրսային բազան՝ մասնագիտությունների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ սարք-սարքավորումների և թանկարժեք հաստոցների, տեխնիկաների ձեռքբերման համար: Մինչդեռ քոլեջը կարող է համապատասխան ջանքերի դեպքում ապահովել նվազագույն ռեսուրսային բազան՝ գործատուների հետ հետագա զարգացվող համագործակցության և նվիրատու կազմակերպությունների դրամաշնորհներն ավելի նպատակային օգտագործմանն ուղղելու միջոցով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովելու նպատակով քոլեջը փորձում է ապահովել ֆինանսական միջոցների բաշխման հնարավոր նվազագույն պայմաններ, սակայն որակի շարունակական բարելավման և կայունության տեսանկյունից քոլեջը անելիքներ ունի, քանի որ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման համար ռեսուրսային բազայի համալրման անհրաժեշտություն կա:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ապահով և անվտանգ ուսումնական միջավայր ստեղծելու ուղղությամբ քոլեջն ընդհանուր առմամբ ապահովված է անհրաժեշտ տեխնիկայով և ռեսուրսներով, սակայն ջեռուցման համակարգի բարելավման խիստ անհրաժեշտություն կա, ինչը բարձրաձայնում էին նաև ուսանողները:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսներից բավարարվածության կարծիքի ստացման կանոնակարգված մեխանիզմների գործարկումը, դրանց կիրառման և վերլուծության արդյունավետության գնահատումը, ինչը խնդիրների դուսրբերման և դրանց հիման վրա պլանավորվող ծրագրերի հնարավորություն կտա, այդ թվում՝ հիմնավորված կլինի բարերարների նվիրատվությունների կիրառումը քոլեջի համար ավելի առաջնահերթ և նպատակային խնդիրների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է քոլեջի ռեսուրսների կայունության և շարունակականության խնդիր, առկա համագործակցային կապերը գործատուների հետ դեռևս չեն լրացնում այդ բացը բոլոր մասնագիտությունների համար, քոլեջի ֆինանսական ռեսուրսները

հնարավորություն չեն տալիս ռեսուրսների բարելավման և կայունության համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ՍՏՊՔ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության մասին հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված անմիջական ղեկավարին: Ստորաբաժանումների ղեկավարները տնօրենին են ներկայացնում կատարված աշխատանքների արդյունքները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չէ հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ, որը կունենա հստակ բաժիններ, ինչպես նաև կկապակցվի ՌԾ նպատակների և խնդիրների իրականացմանը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները իրականացված գործընթացների վերաբերյալ կրում են նկարագրական բնույթ: Ստորաբաժանումների հաշվետվությունները չունեն վերլուծական բնույթ (օրինակ՝ ամբիոնների վարիչների հաշվետվությունը հիմնականում կատարված աշխատանքների շարադրանք է): Հաշվետվություններում առկա չեն քանակական և որակական վերլուծություններ, որոնք ցույց կտան աշխատանքների արդյունքում գրանցված առաջընթացը կամ բարելավման ենթակա կողմերը:

Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը քննությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում քոլեջի ղեկավար կազմին, որտեղ ներկայացվում են որոշ առաջարկություններ ուսանողների մասնագիտական զարգացման ուղղությամբ, օրինակ՝ ընդլայնել պրակտիկայի իրականացման շրջանակը, քոլեջում կազմակերպել հանդիպումներ՝ հրավիրելով փորձառու և արհեստավարժ կադրեր, մասնագիտացված լսարանները համալրել արդի ուսումնաօժանդակ նյութերով, կամ առաջարկում և միջնորդում են մասնագիտական գիտելիքների իմացությամբ աչքի ընկած շրջանավարտներին աշխատանքի տեղավորել համապատասխան վայրերում:

Տնօրենը հաշվետու է Կառավարման խորհրդին: Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Փորձագիտական այցից պարզվեց, որ տնօրենը 2022թ. և 2023թ. հաշվետվություն չի ներկայացրել ԿԽ-ին՝ կախված այդ տարիներին նախկին տնօրենի ժամանակավորապես վերականգնմամբ և կրկին հեռացմամբ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի նախորդ հաշվետվությունները չունեն վերլուծական հիմք. ըստ տարիների ներկայացված են ուսանողների շարժը, ընդունելության արդյունքները, ուսումնամեթոդական աշխատանքները և այլն:

Քոլեջը սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություններ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետական եկամուտների կոմիտեին, Վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչություններին: Լիազոր մարմիններին ներկայացված հաշվետվությունները ներառում են ոչ միայն ֆինանսական ցուցանիշներ, այլ նաև ուսանողների և դասախոսական անձնակազմի շարժը, վերջիններիս որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն և ընդունելության արդյունքները:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջը չունի պաշտոնական կայքէջ: Ֆինանսական ռեսուրսի սղության պատճառով կայքէջի պատրաստումը դեռևս պլանավորման փուլում է:

Որպես տեղեկատվական հարթակներ օգտագործվում է ֆեյսբուք սոցիալական ցանցը: Ֆեյսբուք սոցիալական ցանցում առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն ուսանողների արտադրական և նախաավարտական պրակտիկաների, համագործակցության հուշագրերի, թողարկվող մասնագիտությունների, ընդունելության պայմանների, թափուր աշխատատեղերի, քոլեջում կազմակերպվող ուսումնական և ժամանցային տարբեր միջոցառումների մասին:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում գործում են հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմներ, ինչպիսիք են ֆեյսբուքյան էջը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսակապը: Պետք է փաստել, որ հետադարձ կապի մեխանիզմների արդյունքում տվյալներ չեն հավաքագրվում և վերլուծվում: Քոլեջին հիմնականում դիմում են ընդունելության կարգի, մասնագիտությունների հետ կապված հարցերով:

Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստանում են լսարաններում և միջանցքներում փակցված ցուցատախտակներից (ժամանակացույցներ, դասացուցակներ, հայտարարություններ), ինչպես նաև կուրսղեկների միջոցով, նրանց մեծամասնությունը չի հետևում քոլեջի ֆեյսբուքյան պաշտոնական էջին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Որպես տարածաշրջանային հաստատություն՝ քոլեջում իրականացվում են կարճաժամկետ դասընթացներ՝ ապահովելով ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև արտաքին այլ շահակիցների կարողությունների և հմտությունների շարունակական բարելավումը: Մասնավորապես՝ Կապանի զբաղվածության մարզային կենտրոնի (այժմ՝ ՄՄԾ Կապանի տարածքային կենտրոն) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են «Վարսավիրական արվեստ», «Զարդային դիմահարդարում», «Խոհարարական արվեստ», «Սեղանի ձևավորում», «Եռակցող» և այլ մասնագիտություններով կարճաժամկետ դասընթացները: Վերջին երեք տարիների ընթացքում իրականացվել են դասընթացներ աշխատաշուկայում առավել պահանջարկ վայելող «Էլեկտրագազաեռակցող» մասնագիտությամբ:

Քոլեջն արժանացել է ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին մարդասիրական օգնություն և աջակցություն ցուցաբերելու համար, որտեղ իրենց կամավորական աշխատանքով հատկապես աչքի են ընկել ուսանողները:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում հաշվետվողականության համակարգի առկայությունը և գտնում է, որ քոլեջը փորձում է ցուցաբերել պատասխանատու մոտեցում իր ներքին և արտաքին շահակիցների հետ թափանցիկ և բաց հաղորդակցությանը: Միևնույն ժամանակ խումբը նշում է, որ հաշվետվությունները նաև միջոց են ռազմավարական պլանավորմանը հետևելու և վերջինիս իրականացումը գնահատելու համար, ուստի ՌԾ-ից բխող հաշվետվությունների միասնական ձևաչափի ներդրումը կնպաստի ՌԾ նպատակների գնահատմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև տնօրենի հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի զարգացմանը, ինչը կնպաստի խնդիրների վերհանմանը և աշխատանքների շարունակական բարելավմանը, արդյունքում առաջընթաց կապահովի քոլեջի զարգացման ուղղություններում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ակտիվությունը ֆեյսբուքյան հարթակում, որը հնարավորություն է տալիս ապահովել շահակիցների որոշակի շրջանակի տեղեկացվածությունը քոլեջի գործունեության վերաբերյալ: Սակայն, Քոլեջը լիարժեք չի ապահովում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, առկա է տեղեկատվության հրապարակման խնդիր, քանի որ չունեն կայքէջ՝ փաստաթղթերը չեն հրապարակվում: Այստեղ կարևոր է պաշտոնական կայքէջի ստեղծումը, որը հնարավորություն կտա ոչ միայն ներքին շահակիցների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, այլև ներգրավել արտաքին շահակիցներին քոլեջի կրթական գործընթացներում: Կայքէջի ստեղծումը կնպաստի նաև քոլեջի գործունեության թափանցիկությանը:

Դրական է, որ քոլեջում գործում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ ինչպես սոցցանցերով, այնպես էլ գործատուների, ծնողների հետ հանդիպում-քննարկումների իրականացման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներից ստացված տվյալների հավաքագրման արդյունքում: Փորձագիտական խմբի դիտարկմամբ կայքէջի միջոցով հնարավոր կլինի բարելավել հետադարձ կապի մեխանիզմները, որոնք ներկայումս աշխատում են սահմանափակ շրջանակով:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի հասարակությանը գիտելիքներ և արժեքներ փոխանցելու գործընթացը, ինչը նպաստում է կարճաժամկետ ծրագրերով ձեռքբերվող հմտությունների արագ զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին բավարարմանը, ինչպես նաև հումանիտար և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու մշակույթի ձևավորմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը խրախուսում է տարատեսակ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, բաց է քոլեջի գործունեությամբ հետաքրքրված կառույցների և մարդկանց համար՝ ապահովելով կրթական միջավայրի հասանելիությունն ու հրապարակայնությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, գործում են հետադարձ կապի և հասարակությանը գիտելիքեր և արժեքներ փոխանցելու որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի 2019-24թթ. Ռազմավարական ծրագրում արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող նպատակներ ամրագրված չեն, վերջինս քոլեջի համար ռազմավարական առաջնահերթություն կամ հիմնախնդիր չի դիտարկվում: Սակայն ՌԾ-ի նպատակներին հասնելու համար առաջադրված խնդիրներից է մասնավոր հատվածի հետ համագործակցության զարգացումը, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպումը, դուալ համակարգի ներդնումը: Միևնույն ժամանակ քոլեջի ՌԾ-ի տեսլականում նշվում է, որ. «Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում առավել հրատապ է դառնում քոլեջի և մասնավոր հատվածի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կառույցների, զբաղվածության տարածքային կենտրոնների, կրթական հիմնադրամների միջև սոցիալական համագործակցության զարգացումը»:

Համաձայն ՍՊՏՔ ինքնավերլուծության՝ քոլեջը պետք է զարգացնի համագործակցությունը գործատուների հետ՝ կրթական ծրագրերի բարելավման և իրենց կրթական կարիքների բավարարման նպատակով, այլ առաջատար ՄՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդողների փոխանակման ծրագրեր իրականացնի, ուսումնասիրի և խթանի լավագույն փորձը, հարստացնի նյութատեխնիկական բազան: Սակայն քոլեջում արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ապահովման գործընթացները համակարգված չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրված ու բացահայտված չեն արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման ոլորտում քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացման ուղղությամբ ՍՏՊՔ-ում գործընթացներ չեն պլանավորվում և իրականացվում: Պարզեց նաև, որ քոլեջում արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ իրականացնում են տնօրենը և կարիերայի պատասխանատուն: Նշենք, որ կարիերայի պատասխանատուն այդ պաշտոնը ստանձնել է 2024թ. հունվարից:

ՍՏՊՔ-ն համագործակցում է Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների, հասարակական կազմակերպությունների, գործընկեր և գործատու կազմակերպությունների, ինչպես նաև շահակից մասնակիցների հետ: Տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 15 գործընկերների հետ, որոնց հետ համագործակցությունը հիմնականում պրակտիկայի շրջանակներում է (օրինակ՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Լավ ընկեր» ՍՊԸ, Կապանի համայնքապետարան, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, «Արփի սոլար» ՍՊԸ, «Դավիթ Պետրոսյան» ԱՁ, «Մհեր Աբգարյան» ԱՁ, «Զանգեզուր Պրո» ՍՊԸ և այլն): Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բոլոր ձեռնարկությունների հետ կան ամրագրված համագործակցության հուշագրեր և պայմանագրեր: Միևնույն ժամանակ քոլեջը համագործակցում է նաև բուհերի հետ՝ ուսանողների շարունակական կրթությունը ապահովելու նպատակով, (օրինակ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Գորիսի պետական համալսարան, Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի տնտեսագիտական համալսարան, Հայաստանի ագրարային համալսարան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան):

Քոլեջն ունի գործատու ընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է տարբեր հանդիպումներ: Ուսանողների մասնագիտական կողմնորոշման համար քոլեջը կարևորում է համագործակցությունը «Զբաղվածության տարածքային կենտրոնի» հետ՝ զբաղվածության պետական ծրագրերին մասնակցելու ու շրջանավարտների համար թափուր աշխատատեղեր գտնելու նպատակով: 2024թ. «ՀԱՊՀ» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի և ՍՊՏՔ-ի միջև կնքված հուշագրի շրջանակներում էլ համատեղ օգտագործում են բուհի մարզադահլիճը, իսկ «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտությամբ սովորողները իրենց գործնական պարապմունքները անցկացնում են ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի լաբորատորիաներում:

Քոլեջի ուսանողները պարբերաբար մասնակցում են ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում տեղի ունեցող միջոցառումներին (օրինակ՝ «Ապագա ճարտարագետ» մասնագիտական ԷՔՍՊՈ 2024 ցուցահանդես): Կարիերայի ուղղորդման պատասխանատուի նախաձեռնությամբ ուսանողները մասնագիտական ճանաչողական այց են կատարել Կապանում գործող տարբեր

հաստատություններ, օրինակ՝ «Սյունէդ» և «Ար-Աշ» գովազդային գործակալություններ, հեռուստատեսային և ռադիոհաղորդակցման կայան և այլն:

ՍՊՔ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, «Լավ ընկեր» ՍՊԸ-ն, Կապանի համայնքապետարանը և այլն: Համաձայն ՍՊՏՔ ինքնավերլուծության՝ քոլեջը համագործակցում է նաև տարածաշրջանում գործող նախնական և միջին մասնագիտական հաստատությունների հետ, սակայն այդ ամենը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել փորձագիտական այցի ընթացքում:

Քոլեջն ունի որոշակի փորձառություն նաև միջազգայնացման գործընթացում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջն իր ռեսուրսային բազան հիմնականում բարելավել է Միավորված ազգերի զարգացման ծրագրի և «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» կրթական հիմնադրամի օժանդակությամբ: 2006թ. սկսած՝ քոլեջը համագործակցում է քույր քաղաքներ համագործակցության շրջանակներում ԱՄՆ Գլենդել քաղաքի համայնքային քոլեջի հետ: 2006թ-ից ընդգրկված է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը սատարող «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» կրթական հիմնադրամում, որի կողմից ստեղծվել են «Հագուստի մոդելավորում և կարի արտադրության տեխնոլոգիա» և «Հասարակական սննդի սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների ուսումնական կաբինետները և «Հյուսն ատաղձագործական», «Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում», «Եռակցում», «Ոսկերչության» մասնագիտությունների արհեստանոցները, «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցները, որոնք ստեղծվել և կահավորվել են անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով, ինչպես նաև իրականացվել են շինարարական նորոգման աշխատանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր նոր ներդրում քոլեջում նոր հնարավորություններ է ստեղծել ուսանողների կրթական կարիքները բարելավելու համար, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս ոչ բոլոր կարճաժամկետ ծրագրերն են իրականացվում և ոչ բոլոր արհեստանոցներն են օգտագործվում: Քոլեջի կողմից դա բացատրվում է դիմորդների հետաքրքրության նվազմամբ: Ամեն մի նոր ներդրում նոր հնարավորություններ է ստեղծել մասնագիտական

2019թ-ից ՄԻԱՍԻՆ (Miassine) հիմնադրամը շվեյցարական GAN (global apprenticeship network) կազմակերպության համագործակցությամբ և Ժնևի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացնում է «Աշկերտության զարգացումը Հայաստանում շվեյցարական փորձի հիման վրա» ծրագիրը, որի շրջանակում ՍՊՔ ուսանողների հետ կազմակերպել է ճանաչողական և ուսումնական այցեր մարզում գործող ձեռնարկություններ, կնքել է համագործակցության պայմանագրեր «Սյունէդ», «Լավ ընկեր» ՍՊԸ-ների հետ:

Քոլեջը գործընկերային հարաբերությունների մեջ է գտնվում Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի Գլխավոր Հյուպատոսության հետ, որի հետ կապը ընդգծվում է նաև մշակութային կյանքում: 2024թ փետրվարի 10-ին տեղի է ունեցել ԻԻ հեղափոխության 45-րդ տարեդարձը, որի շրջանակներում կազմակերպվել էր պաստառի մրցույթ, որը ընդգծել է հայ-իրանական բարեկամությունը: Մրցույթում հաղթող է ճանաչվել քոլեջի «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» մասնագիտության ուսանողուհին:

Համաձայն ՍՊՏՔ ինքնավերլուծության՝ քոլեջը պլանավորում է քայլեր ձեռնարկել միջազգային համագործակցության ուղղությամբ Ավստրիայի և Ֆրանսիայի առաջադեմ միջին

մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման նպատակով: Այս ուղղությամբ արդեն կայացել է հանդիպում տվյալ երկրների դեսպանատների ներկայացուցիչների հետ, որի արդյունքում որոշվել է կազմել հուշագիր:

ՍՊՏՔ-ն իր արտաքին կապերի մեկ այլ մեխանիզմ է դիտարկում ուսանողների մասնակցությունը և հաղթանակները տարբեր միջազգային մրցույթներում: Քոլեջն ակտիվ քայլեր չի ձեռնարկում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների անգլերեն լեզվին լավ և գերազանց տիրապետում են 30%-ը, վարչական աշխատակիցների՝ 50%-ը, ուսանողների՝ 32-ից 100%-ը՝ կախված մասնագիտությունից: Ռուսերենին լավ և գերազանց տիրապետում են դասավանդողների 84%-ը, վարչական աշխատակիցների՝ 100%-ը, ուսանողների՝ 27-ից 99%-ը՝ կախված մասնագիտությունից:

Անհրաժեշտ է փաստել, որ դեռևս քոլեջը քայլեր չի ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի գործատու գործընկերների ընդգրկուն ցանկ, որը նպաստում է կրթական ծրագրերի բարելավմանը և պրակտիկաների կազմակերպմանը: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման տեսլականը արտացոլող քաղաքականություն, ընթացակարգեր և չի իրականացնում կանոնակարգված գործընթաց, որը հնարավորություն կտար քոլեջին հստակ պլանավորել իր գործողություններն այդ ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ քոլեջին անհրաժեշտ է ոչ միայն գործընկերային կապերի ընդլայնում, այլ նաև նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ ու արդյունավետ համագործակցություն և փորձի փոխանակում, որը կնպաստի իր դրական փորձի տարածմանը, գործընթացների շարունակական բարելավմանն ու զարգացմանը:

Փորձագիտական խումբը հատկանշական է համարում քոլեջի համագործակցության լայն շրջանակը, որը նպաստում է նաև, որ շրջանավարտներո իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնեն: Այնուհանդերձ, անհրաժեշտ է համագործակցային դաշտի ընդլայնում՝ մասնավորապես խթանել միջազգային կապերի հաստատումը միջազգայնացման ուղղության զարգացման տեսանկյունից և ուսումնասիրել այլ ՄԿՈՒ հաստատությունների առաջավոր փորձը, որն իր հերթին կնպաստի առավել մրցունակ կադրերի պատրաստմանը:

Դրական է, որ քոլեջն իր ռեսուրսային բազան բարելավել է միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման արդյունքում, սակայն անհանգստացնող է, որ այդ ռեսուրսները արդյունավետ չեն օգտագործվում: Քոլեջը հետևողական քայլեր չի ձեռնարկել կարճաժամկետ ծրագրերի արդյունավետ իրականացման համար, որպեսզի ապահովի ուսանողների հետաքրքրվածությունը այդ մասնագիտությունների նկատմամբ:

Դրական է, որ չնայած քոլեջում բացակայում են միջազգայնացմանը միտված հստակ ընթացակարգերը, այնուամենայնիվ առկա են որոշ նախաձեռնություններ, մասնավորապես ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի համայնքային քոլեջի հետ համագործակցության հիմքերը, ինչը կարող է նպաստել

կրթական ծրագրերի զարգացմանը, ուսանողների և անձնակազմի փորձի փոխանակմանը և քոլեջի միջազգային կապերի ընդլայնմանը:

Գովելի է, որ քոլեջը համագործակցում է հայաստանյան տարբեր բուհերի հետ, սակայն դրանք դեռևս ուղղված են միայն կրթության շարունակականության ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ այդ համագործակցությունները ծրագրային և մասնագիտական հարթակ բերելու պարագայում իրականացվող մասնագիտությունների լավարկման առումով դրական արդյունքներ կարող են ապահովել:

Դրական է, որ Քոլեջի ունեցած համագործակցության շրջանակը տեղական միջավայրում նպաստում է ոչ միայն ուսանողների ընթացիկ ուսումնառության կազմակերպմանը, այլև միջոցառումների կազմակերպմանը, որը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, վերջինս նաև մոտիվացիայի աղբյուր է ուսանողների համար՝ ապահովելով նրանց հաղորդակցության հնարավորությունները ոլորտում հաջողությունների հասած մասնագետների հետ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ նախնական և միջին մասնագիտական հաստատությունների հետ համագործակցությունը ակտիվացնելու կարիք ունի, միջքոլեջային համագործակցությունները կնպաստեն լավագույն փորձի տարածմանը, դասախոսական կազմերի միջև փորձի փոխանակմանը:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացությանը, ապա անհրաժեշտություն է վերջիններիս լեզվի իմացության կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնելը քոլեջում որոնք կնպաստեն հետագայում վերջիններիս շարժունությանը և փորձի փոխանակմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՍՏՊՔ-ն ակտիվ համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ, ինչը դրական է անդրադառնում կրթական ծրագրերի որակի, դրանց պրակտիկ բաղադրիչի զարգացման, ռեսուրսների բարելավման վրա, կարևորել է համագործակցային դաշտի ընդլայնումն ու միջազգայնացումը, և փորձում է այդ ուղղությամբ իրականացնել քայլեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՍՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2015թ.-ից:

ՈԱ գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը 2015թ-ին մշակել է «Որակի ապահովման քաղաքականությունը», որը ոլորտը կարգավորող միակ փաստաթուղթն է քոլեջում: Քաղաքականությամբ սահմանվում են՝ քոլեջում որակի սկզբունքները, ՈԱ համակարգի նպատակներն ու խնդիրները, ՈԱ հիմնական ոլորտները, ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը, ՈԱ գործընթացներն ու ընթացակարգերը: Քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է՝ «Նպաստել քոլեջի գործունեության նկատմամբ վստահության ամրապնդմանը և հավաստել, որ քոլեջի շնորհած որակավորման աստիճանների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կերպով կառավարվում են»:

Որակի ապահովման պատասխանատուի բացակայությամբ պայմանավորված՝ ՈԱ տարեկան պլաններ քոլեջում առկա չեն: ՈԱ պատասխանատվությունների բաշխում այլ ստորաբաժանումների և աշխատակիցների վրա իրականացված չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է առանձին հաստիք, որը 2020թ-ից համատեղությամբ ստանձնել է ցիկլային հանձնաժողովներից մեկի նախագահը, սակայն 2022թ-ին վերջինս ազատվել է աշխատանքից և մինչ օրս քոլեջը չունի որակի ապահովման պատասխանատու: Առանձին աշխատասենյակ պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում չեն իրականացվել հարցումներ շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների կամ այլ կարիքները: Միայն 2022թ-ին կարիերայի պատասխանատուի կողմից փորձ է արվել իրականացնել հարցումներ՝ ուսանողների և դասախոսների կարիքների գնահատման համար: Մշակվել է էլեկտրոնային հարցաթերթիկ, սակայն լրացման արդյունքները չեն հավաքագրվել, չեն վերլուծվել և անձնակազմը տեղեկացված չէ հետագա քայլերի մասին, իսկ հարցումը պլանավորած կարիերայի պատասխանատուն վերջին տարում փոխվել է:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերը նշված հարցաթերթերը վերջերս վերանայվել են և մշակման փուլում են նոր հարցաթերթերը՝ ուղղված դասախոսների և ուսանողների կարիքների վերհանմանը, սակայն դրանք դեռ չեն կիրառվել: 2015թ-ից ի վեր վերանայված չէ նաև քոլեջի որակի ապահովման քաղաքականությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից չեն կազմակերպվում ֆոկուս խմբային ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ:

Որակի ապահովման համակարգը քոլեջում դեռ չի գործարկվում: Գործընթացները գտնվում են պլանավորման փուլում:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են քոլեջում առկա անհրաժեշտ հիմքերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում վարչական, դասախոսական և ուսանողական ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել և իրականացվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնավերլուծությունը,

այսուհանդերձ, չի տարածվել մյուս շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ամբողջությամբ չեն արտացոլված ինքնավերլուծությունում: Ներկայացված տոկոսային տվյալների մեծամասնությունը բանավոր հարցման արդյունքում է գրվել, այլ ոչ հիմնավոր վերլուծության:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի որակի ապահովման քաղաքականության հաստատումը դեռևս 2015թ-ից: Սակայն այդ աշխատանքների համար պատասխանատու անձի բացակայությունը, առավելապես վերջին տարիներին, հանգեցրել է այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների բացակայությանը: Արդյունքում քոլեջի որևէ գործընթացի կամ ոլորտի արդյունավետության գնահատումներ կամ վերլուծություններ չկան, իսկ որակի ապահովման քաղաքականությամբ սահմանված որևէ ընթացակարգ կամ մեխանիզմ չի իրականացվում՝ խոչընդոտելով քաղաքականության կյանքի կոչելուն:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում մինչ այժմ կանոնակարգված ձևով չեն իրականացվել հարցումներ և ֆոկուս խմբեր, ինչը հանգեցրել է գործընթացների կամ մեխանիզմների արդյունավետության վերլուծությունների, ինչպես նաև շահակիցների կարիքների գնահատման փաստաթղթավորման բացակայությանը: Վերջինս խոչընդոտել է նաև ԻՎ չափանիշներում պահանջվող վերլուծությունների ներկայացմանը և արտաքին գնահատման համար անհրաժեշտ հիմքերի տրամադրմանը:

Փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը ԻՎ գործընթացում ներքին շահակիցների ներգրավման համար: Միևնույն ժամանակ քոլեջում որակի ապահովման մշակույթի ներդնումը և օբյեկտիվ տվյալների հավաքագրումը մեծապես կնպաստի կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների հիմնավորվածությանը և քոլեջի թիրախային զարգացմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում որակի ապահովման համակարգը դեռ ձևավորված չէ, չնայած փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջն ունի կադրեր, որոնք կարող են ստանձնել ՈԱ պատասխանատվությունը և նպաստել ՈԱ համակարգի ներդրմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ քոլեջում ներդրված չէ որակի ապահովման համակարգը, վերջին տարիներին թափուր է ՈԱ պատասխանատու աշխատակցի հաստիքը, որի պատճառով չեն իրականացվել պատասխանատուի գործառույթները, առկա չեն գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, դրանց վերլուծություններ և արդյունքների հրապարակումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Փորձագիտական խմբի ղեկավար
Գագիկ Քթրյան

14 հունվարի, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գագիկ Քթրյան - 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի բակալավրիատը, 2007թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2010թ. շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008 - 2012թթ. Երևանի պետական համալսարանում եղել է՝ որպես Կրտսեր գիտաշխատող: 2008 - 2020թթ. դասավանդել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում: 2012 - 2015թթ. ԵՊՀ-ում աշխատել է՝ որպես դասախոս: 2012 – 2015թթ. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում եղել է Որակի ապահովման կենտրոնի ղեկավարի պաշտոնում: 2015 – 2016թթ. ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում եղել է՝ որպես Ուսումնամեթոդական բաժնի որակի ապահովման և վերլուծության բաժանմունքի պետ, 2016 – 2018թթ. նույն համալսարանի՝ Որակի ապահովման և վերլուծության բաժնի պետ: 2018 – 2021թթ. ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (1-ին դասի խորհրդական): 2021 – 2023թթ. ՀՀ Բարձրագույն որակավոր-ման կոմիտեի նախագահի տեղակալ, 2023թ. հունվար - հոկտեմբեր՝ կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող: 2015թ.-ից մինչ օրս ներգրավված է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ բուհերի և քոլեջների հավատարմագրման գործընթացներում՝ որպես փորձագետ: 2022թ.-ից մինչ օրս դասավանդում է Հայաստանի եվրոպական համալսարանում: 2024թ.-ի օգոստոսից՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Որակի ապահովման բաժնի ղեկավարն է:

Գայանե Ավետիսյան - 1992թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության ֆակուլտետը: 2006թ. շնորհվել է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 23 գիտական հոդվածների հեղինակ է: 2014թ ստացել է դոցենտի գիտական կոչում: 1991-2020թթ. աշխատել է Գյումրու թիվ 26, թիվ 9, թիվ 1 ավագ դպրոցներում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ (առաջին կարգի որակավորմամբ): 2011 – 2012թթ. ԵԿՏԱ-ի Գյումրու մասնաճյուղում աշխատել է որպես Զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս: 1994թ.-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի դոցենտ: 2019 - 2022թթ. աշխատել է Շիրակի պետական համալսարանի ռեկտորի օգնական, այնուհետև 2023թ. նույն համալսարանում՝ Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչ: 2023թ-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես Որակի ապահովման բաժնի պետ:

Նարինե Միրականյան - 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկականպետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում): Մմանկավարժական գիտությունների թեկնածու, է /2016թ./: 2006-2014 թթ. աշխատել է դպրոցում որպես մաթեմատիկայի

ուսուցչուհի: 2014-2016թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Բնագիտամաթեմատիկական առարկաների և Մանկավարժության գիտահետազոտական բաժիններում՝ որպես գլխավոր մասնագետ: 2019-2020 թթ. Աշխատել է Հյուսիսային համալսարանում՝ որպես Որակի ապահովման վարչության պետ: 2020թ.-2021թթ. եղել է ՀՀ Կրթության տեսչական մարմնի «իԳործ» ծրագրի մասնակից: 2021-2022թթ. ՀՀ կրթության տեսչական մարմնի' ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության փորձագետ: 2023-2024թթ. ՀՀ էկոնոմիկային նախարարություն «Նորամուծությունների և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի ղեկավար: Ներկայումս Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետն է: 18 և ավելի գիտամեթոդական հոդվածների հեղինակ է: 2019թ.-ից ներգրավված է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ բուհերի և քոլեջների հավատարմագրման գործընթացներում՝ որպես փորձագետ:

Արևիկ Հովհաննիսյան - 2022թ. սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 2-րդ կուրսում: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող–փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	29.09.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում	16:30	17:40	70 րոպե

N.	30.09.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:40	12:20	40 րոպե
4.	Դասալսումներ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

N	01.10.2024 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուս.մասի, ցիկլային հնաձնաժողովների և ամբիոնների վարիչների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:50	12:40	50 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:50	13:30	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:40	14:40	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Բաց լեռնային աշխատանքներ » մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	14:50	15:40	50 րոպե

7.	Զուգահեռ հանդիպում «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:50	17:40	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:50	18:30	40 րոպե

N	02.10.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի պատասխանատու, Պրակտիկայի վարիչ, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի տեսուչ, Արխիվավար) ղեկավարների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Բաց հանդիպում	10:30	11:10	40 րոպե
3.	Հանդիպում Կրթության որակի պատասխանատուի հետ	11:20	12:00	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:10	12:50	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:30	80 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:40	16:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ	1
2.	Տնօրինական, մանկավարժական և խորհուրդների հաստատված կազմերը	2
3.	Տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդների նիստերի արձանագրությունները	2
4.	Գրադարանի, ուս.մասի, կարիերայի կենտրոնի, ամբիոնների, կադրերի տեսուչի և ամբիոնների վարիչների տարեկան պլաններ	2
5.	Գրադարանի, ուս.մասի, կարիերայի կենտրոնի, ամբիոնների, կադրերի տեսուչի ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններ	2
6.	Նախորդ ՌԾ կատարողականի վերլուծություններ	2
7.	Ամբիոնների հաշվետվություններ	3
8.	Կրթական ծրագրերում կատարված փոփոխությունների վերբերյալ վերլուծություններ կամ արձանագրություններ	3
9.	Հաստատված ուսումնական պլաններ	3
10.	Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կարգ	3
11.	Գործատուների, Պետական որակավորման հանձնաժողովի նախագահի առաջարկների վերլուծություններ, որոնք փոփոխության հիմք են հանդիսացել	3
12.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ	3
13.	Ցիկլային հանձնաժողովների և ամբիոնի նիստերի արձանագրություն, որտեղ քննարկվել են կրթական ծրագրերի ուժեղ կամ թույլ կողմերը	3
14.	Ուսանողների արտահոսքը և ներհոսքը վերջին 3 տարիների կտրվածքով	4
15.	Կուրսղեկի կանոնակարգ	4
16.	ՈւԽ-ի նիստերի արձանագրություններ	4
17.	Ուսանողներին տրվող խորհրդատվությունների ժամանակացույց	4
18.	Բուկլետներ	4
19.	Miassine հիմնադրամ-ի հետ վերջին 3 տարիների համագործակցությունը փաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/	4
20.	Ուսումնական մասի հաշվետվություններ	4
21.	Դասախոսների դրույքաչափի ձևավորման նորմերը	5
22.	Դասախոսների ուսումնառության պլաններ	5
23.	Դասախոսների թղթապանակներ /3 կրթական ծրագրերի/	5
24.	Տարեկան խրախուսման արժանացած աշխատակիցների ցանկը /առկայության դեպքում/	5
25.	Վերապատրաստում անցած դասախոսների ցանկ և թեմաներ	5
26.	Նախահաշիվ /բյուջեի բացվածքով/	7
27.	Համագործակցությունների համաձայնագրեր և հուշագրեր /պայմանագրեր/	9

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Առարկայական կաբինետներ
- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈւ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈւՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈւԽ - ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ